CONTEMPORARY DANCE ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՐ CONTEMPORARY DANCE

# MIHR THEATRE
# ՄԻՀՐ ԹԱՏՐՈՆ



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՐ CONTEMPORARY DANCE ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՐ

THEATRE

The First Contemporary Dance Company In Armenia

MIHR Theatre was established in 2003 by brother and sister Tsolak and Shoghakat MLKE-Galstyans in Armenia.
MIHR Theatre is the first contemporary dance company in Armenia. MIHR works without borders, employing its own distinctive approach. The mission of our theatre is to reveal the philosophical depth of every movement by integrating painting, psychology, dance, philosophy, and drama arts.
Throughout its existence, MIHR Theatre has worked in a multidisciplinary manner, exploring various forms of the contemporary dance. Inclusivity, both in the conceptualization and implementation phases, has inspired MIHR to be not only a company but also a concept rooted in creativity.

«Միհր» թատրոնը հիմնադրվել է 2003 թվականին եղբայր ու քույր  Ցոլակ և Շողակաթ Մլքե-Գալստյանների կողմից:
«Միհր» թատրոնը ժամանակակից պարի առաջին թատրոնն է Հայաստանում: «Միհր»-ը ստեղծագործում է առանց սահմանների՝ ցուցաբերելով իր յուրօրինակ մոտեցումները: Մեր թատրոնի նպատակն է բացահայտել ամեն շարժման փիլիսոփայական խորությունը՝ համակցելով փիլիսոփայությունը, պարը, հոգեբանությունը և դրամատիկ արվեստը:
Իր ստեղծագործական գործունեության ընթացքում «Միհր»-ն աշխատել է բազմաբնագավառ ձևաչափով՝ հետազոտելով ժամանակակից պարի տարբեր ձևերը: Ներառականությունը, ինչպես հայեցակարգման, այնպես էլ իրագործման փուլերում, ոգեշնչել է «Միհր»-ին լինել ոչ միայն թատրոն, այլ նաև ստեղծարարության վրա հիմնված գաղափար:

## **Նախաբան**

Ճանապարհին սկսվում է ստեղծագործական անհամաձայնությունից համակարգի հետ և փորձից՝ փոխել համակարգը: Բեմը միաձուլեց բոլոր արվեստները:
Պարը միաձուլվեց նկարչությանը, նկարչությունը՝ գրվածքին՝ դառնալով ոգեշնչման ճանապարհ:
Պարը միակ պատասխանը չէ. բոլոր պատասխաններն են:
Քայլերը բաղկացած են ցավից, կորստից, անհամաձայնությունից: Բայց ուրիշ ճանապարհ չկա: Թատրոնին ծառայելն ու բեմում լինելն ուղի է, որը տիեզերական բարձրության ու աներևակայելի անդունդի մեջ է միաժամանակ:
Մարմինն ունի սահմանափակումներ. արդյո՞ք ունի: Իսկ միտքն արդյո՞ք ունի… Այս սահմանափակումները հանելը անսահմանափակին հասնելու փորձ է, որի ընթացքում գործընթացն ավելի կարևոր է, քան վերջնարդյունքը, բայց առանց վերջնարդյունքի չկա գործընթաց, և սա է, որ ստեղծագործական ներքին պայքարը սարքում է իմաստալից:
Երազանքը՝ լինել արվեստի շրջանի մեջ, երբ դու ոգեշնչում ես, և ոգեշնչման այդ շղթան պտտվում է և ոգեշնչում քեզ, ու դու նույնիսկ չես կասկածում, որ քո ոգեշնչման սկզբում եղել ես դու…
Պայքարը պարի անվերջ լինելու համար է. չկա ոչ մի դադար, կա միայն պատմություն, որը կպարենք:
Թեման ծնվում է հարցերից և վերածվում շարժման, որը հայացքի մեջ է հանդիսատեսի:
Չվախենալ և պարել այն ժամանակ, երբ չկա ուժ, կա կամք, որը պարում է, ու դու ես նրա հետ պարում:
Քայլեցիր, ընկար, վեր կացար, շարունակեցիր: Ճանապարհի փուսերը կամրացնեն մեր ոտքերը, փշերը կուժեղացնեն մեր կամքը:
Ես շնորհակալ եմ դժվարություններին, որոնք վառելիքն են առաջ շարժվելու:
Պարը կյանքն է: Պարը օդն է: Շարժումը վերացնում է անիմաստ մտքերը, և այդ պահին դու միաձուլված ես. հոգիդ, մարմինդ ու մտքերդ միասնական են պարի մեջ:

Ամեն ինչ Պար է…

**Ցոլակ Մլքե-Գալստյան**

Երբ սկսում էինք, ուզում էինք փոխել աշխարհը: Մենք մտածում էինք` ստեղծել ենք մի բան, որ էլ աշխարհում չկա: Այդ ժամանակ չգիտեինք ժամանակակից պարի գոյության մասին, ու երևի դրա պատճառով էլ ժամանակակից պարը մենք ոչ թե սովորել, այլ արարել ենք: Իսկ փաստը, որ մենք ուզում էինք փոխել աշխարհը, եղավ այն, որ ինչքան էլ աշխարհը փորձեց մեզ փոխել, մենք, միևնույն է, չփոխվեցինք: Մնացինք նույն մարդիկ, ովքեր համաձայն չեն մեր իրականության հետ, մարդիկ, ովքեր հավատում են` արվեստն է խոսում աշխարհի հետ պարի լեզվով: Մեզ համար երբեք հստակ սահման չի եղել, թե որտեղ է բեմը. այն կարող է լինել բացօթյա մի տարածք, որը մենք կվերածենք բեմի, որի վրա հետագայում էլ կլինեն ուրիշների ներկայացումները, կամ հնագույն պատմական տարածք, որին նոր շունչ կտանք, կամ միջազգային բեմեր, որտեղ Հայաստանը կներկայացնենք: Այնպես, ինչպես տարածքը, այդպես էլ մարմինը մեզ համար չունի սահմաններ, ու ստեղծագործելով տարբեր կարողությունների տեր մարդկանց հետ՝ միայն մեծացրել ենք մեր ներկապնակը. խուլերից սովորել ենք այլ զգայարաններով լսել երաժշտությունը, իսկ հենաշարժողական խնդիրներով մարդկանցից՝ նոր պարամտածողություններ:
Պարը իմ մեջ ապրող անկեղծությունն է: Շարժվելով՝ կարծես դու բաց ես ամբողջ աշխարհի համար, իսկ հենց այդ նույն ժամանակ ամբողջ աշխարհը հենց դու ես: Ապրելով այս տագնապալի իրականության մեջ՝ կարողանում ես քեզ գտնել շարժվելով…

Դու ես հենց այն պարը, որ քո ներսում է:

**Շողակաթ Մլքե-Գալստյան**

## Preface

The path begins with creative disagreement within the system and an attempt to change the system. The stage merged all the arts. Dance merged with painting, painting merged with text, and all this became a way of inspiration.
Dance is not the only answer: it is all the answers.
The steps consist of pain, loss, disagreement. But there is no other way. Serving the theatre and being on the stage is a path that is in the cosmic height and unimaginable abyss at the same time.
The body has limitations, doesn’t it? And does the mind? Removing these limitations is an attempt to reach the unlimited, during which the process is more important than the end result, because the end result is unattainable and takes on the meaning of creative struggle.
The dream of being in a cycle of art when you inspire, and that cycle of inspiration spins and inspires you, and you don't even suspect that it was you who started your inspiration...
The struggle is for the dance to be endless: there is no pause, there is only a story that we will dance.
The theme is born from the questions and turns into a movement that is in the look of the audience.
Not to be afraid and dance when there is no strength: there is a will that dances and you dance with it.
You walked, fell, got up, continued. Holes on the road will strengthen our legs, thorns will strengthen our will.
I am grateful for the difficulties that are the fuel to move forward.
Dance is life. Dance is the air. Movement eliminates useless thoughts, and in that moment you are merged; your soul, body and thoughts are united in dance.

Everything is Dance...

**Tsolak MLKE-Galstyan**

When we started, we wanted to change the world. We thought that we had created something that did not exist in the world. At that time, we did not know about contemporary dance, and perhaps that is why we did not ‘learn’ contemporary dance, but ‘create’ it. And the fact that we wanted to change the world was the fact that no matter how much the world tried to change us, we still didn't change. We are still the same people who disagree with our reality, people who believe in art, and speak using the language of dance. For us, there was never a defined boundary where the stage was. It can be an outdoor area that we will turn into a stage, on which there can be other people's performances, or ancient historical areas that we will breathe new life into, or international stages where we will present Armenia. Like the space, the body has no boundaries for us, and by creating with people with all abilities, we have only increased our palette: from deaf people listening to music with other senses, and people with different body problems learned new ways of thinking.
Dance is the sincerity that lives in me. Moving as if you are open to the whole world, and at the same time the whole world is just you. In this alarming reality, you can find yourself in dance...

You are the dance that is inside of you.

**Shoghakat MLKE-Galstyan**

## Հեռավորություն

ժամանակակից պար

## Distance

Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2022 թվականի հունիսի 15, Թբիլիսի, Վրաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Ներկայացման ձայնը պարողների շնչառությունն է և այն աղմուկը, որը կա բեմում՝ շարժումների հետևանքով:
**Բեմում՝ 3 հոգի:**
**3 մենակատար՝**
Մեկուսացված՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
Փակված՝ Պետրոս Ղազանչյան
Ամփոփված՝ Իննա Ղազարյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Պարամտածողությունը կառուցվում է մարմնի ու լույսի միաձուլումից: Լույսը մարմնի վրա է: Լույսն ամրացած է մարմնին: Լույսը շարունակությունն է շարժման և սկիզբը՝ միաժամանակ:
Շարժումները համադրում են կտրուկ և փափուկ շարժումները միաժամանակ, և պարը կտրուկ-փափուկ է իր լուծման մեջ:
Միասնական պարային մտածողությունը շարունակում է կտրուկ և փափուկ մոտեցումը բոլոր կատարողների մեջ՝ ձևափոխելով և ավելացնելով արագությունը: Պարը հայելային է, բայց արտացոլում չունի, այլ ունի արձագանք՝ մի կատարողից մյուսին:
Կրկնությունը՝ որպես ձևափոխման և նոր մտածողության ձև:
Պարի սկիզբը և ավարտը ոչ մեկ պարողի, այլ բոլոր պարողների մեջ՝ որպես մի շարժման ու մի մարմնի լուծում:
**Գաղափար**
2020 թվականի համավարակից հետո հեռավորությունը սկսեց ձևափոխվել:
Սոցիալական հեռավորություն, ինքնամեկուսացում և ամենաազդեցիկը՝ համացանցային հեռավորություն, երբ որ կյանքը տեղափոխվեց անիրական տիրույթ: Սրանք դարձան հիմքը գաղափարի. երեք կերպար՝ հեռավորության ինքնամեկուսացման մեջ: Լույսի հեռավորությամբ մենք հաշվում ենք տիեզերքը: Լույսը ևս հեռավորություն է: Կերպարները մեկուսացված են միմյանցից. նրանք ամփոփված են իրենց մեջ:
Շրջանը սահմանափակում է նրանց և ստիպում գոյատևել հստակ սահմանների մեջ:
Լույսի գիծը վերածվում է խեղդող իրականության, որտեղ օտարները, լինելով հեռու, տանջում են քեզ. ժամանակը դառնում է անվերջ տանջանքի շրջան:
Հարաբերությունները հեռավորության ճանապարհ են: Նրանք սկսվում են մոտիկ, իսկ ավարտվում՝ անհասանելի հեռու. դա հանրության պատնեշների արդյունք է ևս:
Հեռավորությունը դարձավ մի բան, որը մի մասն է կերպարների, և նրանք ամեն ինչ չափում են: Հեռավորությունը դարձավ նրանց մի մասը:
Մենք իրարից հստակ հեռավորության վրա ենք:

Շունչ: Մթություն: Հեռավորություն:

**Duration:** 30 min
**Date of the premiere:** June 15, 2022, Tbilisi, Georgia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** The sound of the performance is the dancers' breathing and the noise that is on the stage as a result of the movements.
**There are 3 people on the stage.**
**3 soloists**
Isolated: Tsolak MLKE-Galstyan
Closed: Petros Ghazanchyan
Self-Contained: Inna Ghazaryan

**Choreography**

Choreography is built on the fusion of body and light. The light is on the body. The light is attached to the body. Light is the continuation and the beginning of a movement at the same time.

The movements combine sharp and smooth movements at the same time and the dance is sharp-smooth in its solution.

The unified choreography continues sharp and smooth approach in all performers, transforming and increasing the speed. The dance is mirrored, but it has no reflection; it has a mirror reflection, but has a response from one performer to another.

Repetition as a form of transformation and a new way of thinking.

The beginning and end of the dance is not in one dancer, but in all dancers, as a solution of one movement and one body.

**Concept**

After the 2020 pandemic, the distance began to transform.

Social distance, self-isolation, and the most influential - cyber-distance, as life moved into the realm of the unreal. These factors became the basis of the idea: three characters of distance in self-isolation. We measure the universe by the distance of light. Light is also a distance. The characters are isolated from each other: they are self-contained.

The circle restricts them and forces them to exist within precise boundaries.

The line of light turns into a suffocating reality, where strangers, being far away, torture you: time becomes a circle of an endless torture.

Relationships are the path of distance. They start close and end unreachably far, and this is also a result of public barriers.

Distance has become something that is part of the characters and they measure everything. Distance became part of them.

We are at a precise distance from each other.

Breath. Darkness. Distance.

## Սպիտակ գծեր սևի վրա

Գործողություն-նկարչություն, ժամանակակից պար

## White Lines on Black

Action-Painting, Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 40 րոպե
**Առաջնախաղը՝** 2020 թվականի փետրվարի 25, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Գրվածքը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝ «**Տիեզերք» բենդ
**Բեմում՝ 5 հոգի:**
**3 մենակատար՝**
Ցոլակ Մլքե-Գալստյան
Շողակաթ Մլքե-Գալստյան
Պետրոս Ղազանչյան
**2 երաժիշտ՝**
Լուսինե Մլքե-Գալստյան
Էլիզա Բաղդիյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Պարը կառուցված է թույլ և փափուկ շարժումների վրա: Արագությունը պահի տակ ավելանում է, բայց փափկությունը չի կորչում: Կրկնվող համակարգ ու դադար:
Շարունակությունը չի կանգնում ճկվող համակարգ ձգումների մեջ:
Հատակի աշխատանք, որը բարձրանում է և կրկին իջնում հատակին: Պտույտները բերում են դադարի:
Կտրուկ ինքնաբացահայտող շարժումներ մարմնի ամբողջ երկայնքով: Շեշտադրումը ձեռքերի վրա:
Համակարգը հաշվարկի հիմքով մեկից տասը: Շեշտադրումը ձեռքերի և հաշվարկի վրա, որը տանում է անցումային համակարգի և արագության: Հատակը շարունակություն է՝ փափուկ, կտրուկ և դանդաղ, մաքուր**:**
Շարժումը վերածվում է գծի, որն անցնում է հանդիսատեսին և վերադառնում կատարողներին:
**Գաղափար**
1920-ականների ուսումնասիրությունը սկսեց բարձրացնել ինքնաճանաչման հարցեր, որոնք սկսեցին փորփրել անձնական պատմությունները, և այդ մոտեցումով համադրվեցին անցյալը, ներկան ու արմատները:
Թեման բաց է: Նկարչությունը՝ որպես սկզբնական ոգեշնչման աղբյուր, երաժշտությունը՝ որպես լրացում:
Ինքնաճանաչողություն՝ ուրիշի արվեստի ու սեփական մտքերի հակադրության մեջ:
Ոչ մի միանշանակություն, այլ հակասություններով կառուցված ճանապարհ՝ հստակ վերջակետով:

Գրվածք: Ընդհատվող ձայն: Գիծ: Շարժում:

**Duration:** 40 min
**Date of the premiere:** February 25, 2020, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Script:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Tiezerk Band
**There are 5 people on the stage.**
**3 soloists**
Tsolak MLKE-Galstyan
Shoghakat MLKE-Galstyan
Petros Ghazanchyan
**2 musicians**
Lusine MLKE-Galstyan
Eliza Baghdiyan
**Choreography**
Dance is built on the weak and smooth movements. The speed increases momentarily, but the smoothness is not lost. A repetitive system and a pause.
Continuity does not stop in stretches of a flexible system.
Floor work that goes up and down to the floor again. The rotations bring a pause.
Sharp self-revealing movements along the entire body. The emphasis is on hands.
The system calculates from one to ten. The emphasis is on hands and calculation which leads to the transition system and speed. The floor is a continuation. Smooth, sharp and slow, clear.
The movement turns into a line that passes to the audience and back to the performers.
**Concept**
The study of the 1920s began to raise questions about self-awareness, which began to delve into personal stories, and in that approach, juxtaposed past, present, and roots.
The topic is open. Painting as a source of initial inspiration, music as a supplement.
Self-awareness in the contrast between other people's art and one's own thoughts.
No ambiguity, but a path built with contradictions, with a precise end point.

A script. An intermittent sound. A line. A movement.

## Սև գծեր մոխրագույնի վրա

Գործողություն-նկարչություն, ժամանակակից պար

## Black Lines on Grey

Action-Painting, Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 20 րոպե
**Առաջնախաղը՝** 2020 թվականի հունվարի 26, Փարիզ, Ֆրանսիա
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝ «**Տիեզերք» բենդ
***Մենաներկայացում***
**Մենակատար՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Շարժումը սկսվում է մարմնից և ավարտվում գրչի ծայրին: Շարժումն անվերջանալի է: Գիծը վերածվում է նախշի: Նախշը հստակ չէ: Աբստրակտ նկարը շարունակվում է մարմնի շարժման մեջ:
Պտույտները՝ բոլոր կողմերով, և հատակի ու թռիչքի համադրում՝ գծի շարունակության մեջ: Դադար չկա. կա ընդհատում հանդիսատեսով՝ շարժումը գծի վերածելու և շարունակելու: Պարը՝ որպես շարժվող կտավ:
**Գաղափար**
1920-ականները որպես ոգեշնչում. ժամանակ, երբ արվեստը վերափոխվել է:
2020 թվականի սկիզբը որպես ժամանակ՝ արվեստը նորովի հասկանալու, շարժումը և գիծը միաձուլելու: Ճանապարհի ուսումնասիրում, որը կբերի նորովի հասկանալու, թե որտեղ ես ու ուր ես գնալու:

Կտավը շարժում է: Գույնը պար է:

**Duration:** 20 min
**Date of the premiere:** January 26, 2020, Paris, France
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Tiezerk Band
**Solo Performance**
**Soloist:** Tsolak MLKE-Galstyan
**Choreography**
A movement starts from the body and ends at the tip of the pen. The movement is endless. The line turns into a pattern. The pattern is not precise. An abstract painting continues in precise body movement.
Rotations on all sides and combination of the floor and flight in continuation of the line. There is no pause: there is an interruption by the audience to turn the movement into a line and to continue. Dance as a moving canvas.
**Concept**
The 1920s as inspiration: the time when art was transformed.
The beginning of 2020 as a time to understand art anew, to merge movement and line. Exploring the path that will lead to a new understanding of where you are and where you are going.

The canvas is a movement. Color is a dance.

## Պանդխտության երգը

Տարածքը բացահայտող ժամանակակից պար
Ներկայացումը ոգեշնչված է Հերիքնազ Գալստյանի ստեղծագործություններից
և նվիրված է Հերիքնազ Գալստյանի հիշատակին:

## The Song of a Refugee

Site-Specific Contemporary Dance Performance
This performance is inspired by Heriqnaz Galstyan's art works and
is dedicated to Heriqnaz Galstyan's memory.



**Տևողությունը՝** 40 րոպե
**Առաջնախաղը՝** 2018 թվականի հունիսի 17, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի ձևավորումը** ներշնչված է Հերիքնազ Գալստյանի քանդակներից՝ ի դեմս «Պանդխտության երգը» աշխատանքի:
**Հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** ժողովրդական երգեր և շարականներ (հայկական միջնադարյան եկեղեցական երաժշտություն), մշակումը՝ «Տիեզերք» բենդի
**Բեմում՝ 5 հոգի:**
**5 մենակատար՝**
Պանդուխտ՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
Ուխտավոր՝ Պետրոս Ղազանչյան
Փախստական՝ Լուսինե Մլքե-Գալստյան
Թափառաշրջիկ՝ Էլիզա Բաղդիյան
Գաղթական՝ Աստղիկ Մամիկոնյան (2018)
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Քարն ունի շարժում նույնիսկ քարացած վիճակում: Շարժումը միանում է քարին, և մարմինն ու քարը միաձուլվում են: Ձայնը հնչում է մարմնի հետ հավասար, և քարը դառնում է ձայնի շարունակությունը: Պարամտածողությունը քարացած չէ. այն մշտական շարժման մեջ է: Շարժումը բարդից դեպի պարզը ճանապարհի մեջ է, որտեղ պարզը ներկայանում է որպես ավարտուն բարդություն:
**Գաղափար**
Պանդխտության երևույթն այնքան է հաստատվել հայ իրականության մեջ, որ իր արտացոլումն է գտնում մշակույթի մեջ՝ դառնալով թեմատիկ տարր բազմաթիվ երգերի, գրական երկերի ու արվեստի այլ ձևերի համար:
Պանդուխտի համար հայրենիքը խտացած է երգերի ու հայրենիքի հավերժական խորհրդանիշի՝ քարի մեջ: Քարը հայի աշխարհընկալման ամենաբնորոշ տարրն է: Այն կրողն է մշակույթի տարբեր շերտերի: Այն հիմքն է կյանքի շարունակականության, մխված է յուրաքանչյուր հայի ազգային հիշողության մեջ ու դառնում է նաև նրա կարոտի կրողը, երբ սկսվում է պանդխտության ճանապարհը:
Պանդխտությունը դառնում է կարոտի ու կորուստների մի անվերջանալի գործընթաց, որն արտահայտվում է ձայնի միջոցով: Պանդուխտի հույսը փոխարինվում է կարոտով ու վհատությամբ: Նա հիշողությամբ ամուր թելերով միշտ կապված կմնա իր քարքարոտ հայրենիքին՝ հյուսելով իր անսահման կարոտն արտահայտող երգեր ու զգալով հայրենիքը խորհրդանշող քարերի պակասությունն իր կեցության մեջ:
Ճանապարհը չունի ավարտ, և պանդուխտն ունի սփոփանք միայն կարոտի մեջ: Հայրենիքը միայն տարածք չէ. նաև մարդիկ են, որոնց դու մշտապես կարոտում ես: Ու միգուցե, երբ որ նա վերադառնա, այն բոլոր մարդիկ, ովքեր իրեն սպասել են, արդեն վերածված կլինեն խաչքարերի (հայկական խորհրդանշական քար, որն օգտագործվում է պատմական իրադարձություն նշելու ու հանդերձյալներին հիշելու համար):

«Ես խոսում եմ պանդխտության մասին իմ ձևով... կամը (հայկական հնագույն գյուղատնտեսական գործիք) խորհրդանիշն է դառնում հայրենիքի, և մարդիկ, որոնց համար հայրենիքը փոքր է, դուրս են գալիս դրանից, բայց, միևնույն է, թելերով կապված են... և էդ կապը՝ բազում տարբեր թելերով, դառնում է կարծես ուրիշ մի գորգ, մեր պատկերն է դառնում...»

*Հերիքնազ Գալստյան*

**Duration:** 40 min
**Date of the premiere:** October 2, 2018, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage** is inspired by Heriqnaz Galstyan's sculptures - in particular by the art work "The Song a Refugee"
**Design of dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Armenian folk songs and Sharakans (medieval Armenian church music) – arrangement by Tiezerk Band
**There are 5 people on the stage.**
**5 soloists**
Refugee: Tsolak MLKE-Galstyan
Pilgrim: Petros Ghazanchyan
Asylum Seeker: Lusine MLKE-Galstyan
Wanderer: Eliza Baghdiyan
Emigrant: Astghik Mamikonyan (2018)

**Choreography**

The stone has a movement even in a petrified state. The movement joins with the stone and the body and the stone are being merged. The voice sounds equally with the body and the stone becomes the continuation of the voice. Choreography isn't petrified: it is always in constant movement. The movement is on the way from the simple to the difficult, where the simple is being represented as a finished complexity.

**Concept**

The phenomenon of emigration is established so much in the Armenian reality that it finds its reflection in the culture becoming a thematic element in many songs, literary works and in the other forms of art.

For a refugee, the motherland is being concentrated in the songs and in the stone which is the eternal symbol of the motherland. The stone is the most typical element of the Armenian worldview. It is the bearer of the different layers of the culture. It is the base of the continuation of life and is stuck in the national memory of every Armenian and becomes also the bearer of their longing, when the path of emigration starts.

The emigration becomes an endless process of longing and losses, which is being expressed through voice. The hope of the refugees is being replaced by longing and desperation. They will always be attached with strong ties with their stony motherland, weaving the songs which express their infinite longing and feeling the lack of the stones, symbolizing their motherland, in their being.

The way has no end and refugees feel consolation only in longing. The motherland is not only the territory: it is the people whom they will miss forever. And maybe when they return, all the people, who was waiting for them, have already been turned into cross-stones (symbolic Armenian stone, which is being used to celebrate historical events and to remember the dead).

"I am speaking of alienation in my own way. The flail (an ancient Armenian agricultural instrument) becomes a symbol of the motherland and people who leave their motherland, considering it small for themselves, even though they are attached to it with strings and that attachment with different kinds of strings turns into another carpet which reflects us..."

Heriqnaz Galstyan

## Մենք

Ներառական պար

## We

Inclusive Dance Performance



**Տևողությունը՝** 40 րոպե
**Առաջնախաղը՝** 2017 թվականի փետրվարի 24, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Երաժշտության հեղինակներ և կատարողներ՝** «Տիեզերք» բենդ
**Բեմում՝ 9 հոգի:**
**Մենակատար՝**
Ես՝ Պետրոս Ղազանչյան
**4 ներառական պարողներ՝**
Դու՝ Էդգար Մերջանյան
Դու՝ Արսեն Հարությունյան
Նա՝ Ֆենյա Պողոսյան (2017), Աստղիկ Սարգսյան (2019)
Նա՝ Շուշան Գաբրիելյան (2017), Գայանե Բարսեղյան (2019)
**Կատարող՝**
Դու՝ Կառլեն Կարապետյան
**3 երաժիշտ՝**
Լուսինե Մլքե-Գալստյան
Էլիզա Բաղդիյան
Աստղիկ Մամիկոնյան (2017)
Դավիթ Այդիյան (2019)
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Ամեն մարմին յուրահատուկ է: Մենք ստեղծում ենք շարժումը ոչ թե որպեսզի հարմարացնենք մարմնին, այլ մարմինն է ստեղծում շարժումը: Շարժումը չունի սահմանափակումներ, իսկ մարմինն ունի յուրահատկություններ: Ամեն մարմին բերում է իր բացառիկ ձևը, որը և հանդիսանում է պարամտածողության համակարգի հիմքը: Անսահմանափակ շարժում, ոչ թե որպես գաղափար, այլ որպես պարամտածողություն, որի անսահմանափակ շրջանակներում ստեղծագործում են ներառական կատարողները:
**Գաղափար**
Այն հասարակությունը, որը մեզ շրջապատում է, ամեն գնով փորձում է անհատին ենթարկել իր արհեստական չափորոշիչներին, կոտրել նրան հատուկ եզակիությունը, ստեղծել միանմանություն: Ցանկացած տարբերություն, հստակ արտահայտված յուրահատկություն կասկած է հարուցում ու չի ընդունվում: Ընդհանուր չափորոշիչների սահմաններից դուրս գծեր ունեցող ցանկացած անհատ դուրս է մղվում համակարգից, մերժվում է «սովորականի ու ընդհանուրի» կանոններով ապրողների կողմից, ու «տարբերվող» անհատը հայտնվում է լուսանցքում՝ Մենք-ի գաղափարից դուրս: Սակայն Մենք-ից առանձնացված Ես-ը, Դու-ն ու Նա-ն փորձում են ցույց տալ, որ իրենք էլ են Մենք-ի սահմաններում ու ի սկզբանե ունեն հավասար իրավունքներ ու հնարավորություններ: Ես-ը, Դու-ն ու Նա-ն փորձում են կոտրել հանրության անհանդուրժողականության ու արհամարհանքի շղթան, ցույց տալ, որ իրենք ունեն նույն իրավունքները, սակայն հանրությունն անդրդվելի է ու չի էլ նկատում, թե ինչքան ցավ է պատճառում առանձին անհատին՝ փորձելով նրան պարտադրել իր նախապաշարմունքներն ու չընդունելով եզակիությունը: Իրականությունը, որի մեջ ապրում է հանրությունը, մեքենայացված է ու միշտ ստեղծում է արգելքներ Ես-ի, Դու-ի ու Նա-ի համար:
Ամեն անգամ կորստից հետո հանրությունը գալիս է գիտակցման, բայց միևնույն ժամանակ շարունակում է կառուցել անհանդուրժողականության համակարգն ու կրկին չընդունել հավասարության ու եզակիության գաղափարը: Ու առանձին անհատը մնում է հասարակության անտարբերության առաջ միայնակ ու անզոր:

Ես և Դու նու՞յնն ենք. սա է հարցը, որի պատասխանը Մենք-ն է:

**Duration:** 40 min
**The date of the premiere:** February 24, 2017, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Authors and performers of music:** Tiezerk Band
**There are 9 people on the stage.**
**1 soloist**
I: Petros Ghazanchyan
**4 inclusive dancers**
You: Edgar Merjanyan
You: Arsen Harutyunyan
She: Fenya Poghosyan (2017), Astghik Sargsyan (2019)
She: Shoushan Gabrielyan (2017), Gayane Barseghyan (2019)
**1 performer**
You: Karlen Karapetyan
**3 musicians**
Lusine MLKE-Galstyan
Eliza Baghdiyan
Astghik Mamikonyan (2017)
Davit Aydiyan (2019)

**Choreography**

Each body is special. We create movement not for the body to be adopted, but the body creates the movement. Movement has no limitations, and the body has peculiarities. Each body brings its own unique form, which is the basis of the choreography system. Unlimited movement not as an idea but as a choreography in the infinite frames of which the inclusive dancers create.

**Concept**

The society that surrounds us, tries to subject individuals to its artificial standards, to break uniqueness special to them, to create similarities. Any difference, clearly expressed peculiarity causes doubt and is not accepted. Any individual with the characteristics out of the limits of the common standards is excluded from the system, denied by the ones living with rules of "the ordinary and the general" and individuals who are "different "appear in the margin - out of the idea of We. But I, You and She, separated from We, try to show that they are also within the boundaries of We and have equal rights and opportunities from the beginning. I, You and She try to break the chain of intolerance and contempt of the society to show that they have the same rights, but the society is uncompromising and does not notice how much pain causes to individuals trying to impose on them prejudices and not accepting uniqueness. The reality, in which the society lives, is mechanized and always creates barriers to I, You and She.

Every time after the loss, the society becomes conscious, but at the same time continues building the system of intolerance and doesn't accept the idea of equality and uniqueness again. And a single individual remains alone and powerless in the face of indifference of the society.

Are You and I the same? This is the question, the answer to which is We.

## Լավաշ

Ֆիզիկական թատրոն, ժամանակակից պար

Հայաստան - Իսրայել

Համատեղ ներկայացում՝ ՄԻՀՐ Թատրոն և Գաբրիել Նյուհաուս Ֆիզիկական Թատրոն

Ներկայացումը նվիրված է Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

Ներկայացման ընթացքում ցուցադրվում է լավաշի (հայկական ավանդական հաց) պատրաստման ընթացքը, ինչն իր մեջ կրում է ազգի կյանքի ու գոյատևման գաղտնիքը:

## Lavash

Physical Performance, Contemporary Dance

Armenia-Israel

Joint Performance: MIHR Theatre and Gabrielle Neuhaus Physical Theatre

The Performance is dedicated to the 100th anniversary of the Armenian Genocide.

The process of the preparation of lavash (Armenian traditional bread) is shown during the performance, which contains the secret of life and survival of the nation.



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2015 թվականի հոկտեմբերի 4, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչներ (խորեոգրաֆներ) և ներկայացման գաղափարի հեղինակներ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան, Գաբրիել Նյուհաուս, Շողակաթ Մլքե-Գալստյան, Պետրոս Ղազանչյան, Կազուո Շինոհիրի
**Բեմի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի, Գաբրիել Նյուհաուսի
**Հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի, Պետրոս Ղազանչյանի, «Ատեքս» նորաձևության կենտրոնի
**Երաժշտության հեղինակներ և կատարողներ՝ «**Տիեզերք» բենդ
**Բեմում՝ 8 հոգի:**
**5 մենակատար՝**
Վերապրած՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
Վերապրած՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
Վերապրած՝ Պետրոս Ղազանչյան
Վերապրած՝ Գաբրիել Նյուհաուս
Վերապրած՝ Կազուո Շինոհիրի
**3 երաժիշտ՝**
Լուսինե Մլքե-Գալստյան
Էլիզա Բաղդիյան
Աստղիկ Մամիկոնյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Պարամտածողությունը ոգեշնչված է լավաշի պատրաստման իրական շարժումներից: Ֆիզիկական լարվածությունը միաձուլվում է շարժման փափկության և ձայնի հետ: Պարը ոգեշնչվում է նյութից , և նյութը դառնում է պարի լիարժեք մաս և՛ ոգեշնչման, և՛ կատարման տեսանկյուններից: Շարժումները չեն բաժանվում նյութից, և նյութը չի բաժանվում շարժումներից. նրանք միասնական են և համատեղ: Պարը հանդարտ է և լարված միաժամանակ և օգտագործում է կատարողի ներքին հակադրությունը՝ արագի և դանդաղի: Կատարողը սերտաճում է նյութի հետ, և նյութը դուրս է գալիս նյութի ընկալման դասական շրջանակներից՝ վերածվելով կատարողի:
**Գաղափար**
Մշակույթը խտացված է հայ ազգային խորհրդանիշներից մեկի՝ լավաշի (հայկական ավանդական հաց) ու դրա պատրաստման մեջ:
Լավաշը ներկայացման ամենակենդանի ու գլխավոր կերպարն է՝ հանդես գալով որպես ժողովրդի գոյության համար անհրաժեշտ ու նրա միասնական գիտակցության անբաժանելի տարր: Աշխարհի բոլոր այն ազգերը, որոնք ունեն հաց իրենց մշակույթում, ունեն յուրահատուկ վերաբերմունք հացի նկատմամբ:
Լավաշի պատրաստման ընթացքի մեջ երևում են ժողովրդի կեցությունը, նրա վերաբերմունքն արարելու գործընթացի նկատմամբ: Լավաշը շնչավորված է, քանի որ դուրս է եկել զուտ մարմնական գոյության համար կարևոր նշանակություն ունեցող միջոցների շրջանակից և վերածվել է մշակույթի, ազգային նույնականացման խորհրդանիշի:
Ազգի ոչնչացումը սկսվում է հենց մշակույթի ոչնչացումից: Մշակութային ջարդն առաջին նախապայմանն է դառնում ազգային ցեղասպանության: Ազգը հենվում է իր մշակույթի վրա, որը ստեղծել է իր գոյության սկզբից, և ազգը ոչնչացնողների ծրագիրը միշտ էլ եղել է տվյալ ազգի մշակույթն անհետացնելը:

Մեր պատմությունը լավաշի մեջ է փաթաթված:

**Duration:** 30 min
**Date of the premiere:** October 4, 2015, Yerevan Armenia
**Choreographers and authors of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan, Gabrielle Neuhaus, Shoghakat MLKE-Galstyan, Petros Ghazanchyan, Kazuyo Shionoiri
**Design of the stage:** Tsolak MLKE-Galstyan, Gabrielle Neuhaus
**Design of dresses:** Tsolak MLKE-Galstyan, Petros Ghazanchyan, Atex Fashion Center
**Authors and performers of music:** Tiezerk Band
**There are 8 people on the stage.**
**5 Soloists**
The Survived: Tsolak MLKE-Galstyan
The Survived: Shoghakat MLKE-Galstyan
The Survived: Petros Ghazanchyan
The Survived: Gabrielle Neuhaus
The Survived: Kazuyo Shionoiri
**3 musicians**
Lusine MLKE-Galstyan
Eliza Baghdiyan
Astghik Mamikonyan

**Choreography**

Choreography is inspired by the real movements of the preparation of lavash. Physical tension is merged with the softness of the movement and with the sound. The dance is inspired by the material. The material becomes a full part of dance both from the perspective of inspiration and performance. Movements are not being separated from the material and the material is not separated from movements: they are united and joint. The dance is quiet and tense simultaneously and uses the performer's inner contradiction of the fast and the slow. The performer coalesces with the material and the material goes beyond the classical perception of the material, turning into an actor.

**Concept**

Culture is concentrated in one of the Armenian national symbols - lavash (traditional Armenian bread) and in its preparation.
Lavash is the best and most important character of the performance, acting as an indispensable element important for the existence of the nation and for its united consciousness. All the nations of the world, which have bread in their culture, have a unique attitude toward bread.
The life of the nation and its attitude towards the process of creation is seen in the preparation of lavash. Lavash is animated since it has come out of the scope of the means essential for the mere physical existence and has become a symbol of culture and national identity.
Destruction of the nation begins with the destruction of culture. Cultural genocide is the first precondition for a nation’s genocide. The nation relies on its culture, which has been created from the very beginning of its existence and the intention of the ones who want to annihilate the nation has always been the disappearance of the nation's culture.

Our history is wrapped in lavash.

## Անուններ

Զգայական շարժում, ժամանակակից պար

Համատեղ ներկայացում. Հայաստան - ԱՄՆ

Ներկայացումը նվիրված է Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

Ներկայացման հիմքում ընկած են Ցեղասպանությունը վերապրած որբերի իրական պատմությունները:

## Names

Emotional Dance, Contemporary Dance

Joint Performance: Armenia-USA

The performance is dedicated to the 100th anniversary of the Armenian Genocide.

The performance is based on the actual stories of the orphans, who survived the Genocide.



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2015 թվականի հոկտեմբերի 8, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Երաժշտության հեղինակներ և կատարողներ՝ «**Տիեզերք» բենդ
**Բեմում՝ 7 հոգի:**
**4 մենակատար՝**
Մուշեղ՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
Վանե՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
Սերոբ, Ցեղասպան դահիճ՝ Պետրոս Ղազանչյան
Գրիգոր (Սերոբի եղբայրը)՝ հրավիրված դերակատար՝ Ալեքսանդր Արամ Ատամեան Հարվի (ԱՄՆ)
**3 երաժիշտ՝**
Լուսինե Մլքե-Գալստյան
Էլիզա Բաղդիյան
Աստղիկ Մամիկոնյան

**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**

Շեշտը դրվում է զգայականության վրա: Ապրումն անցնում է շարժման մեջ, և ամբողջ պարամտածողությունը ստանում է շեշտված ապրումային ու զգայական երանգ: Գործողությունները ոգեշնչված են իրադարձություններից, իսկ իրադարձությունները՝ իրականությունից: Եվ այս կապը պարամտածողությունը հավաքող օղակն է: Շարժումները լարված են, նյարդային, միևնույն ժամանակ հանգիստ են, ինչպես անխուսափելիությունը: Պարամտածողության մեծ շրջանը հենվում է մանկական խաղի վրա, որը, ամբողջ ընթացքում վերափոխվելով, վերածվում է ծանր իրավիճակն արտացոլող շարժման:

**Գաղափար**

Վանե, Մուշեղ, Գրիգոր, Սերոբ. 4 երեխա, որոնց անունները խաղից վերածվում են բղավոցի: Ցեղասպանության իրականությունն ընդհատեց այդ մանկական խաղը ու վերածեց մանկությունը մղձավանջի: Մարդկային ընդհատված կյանքեր ու անվերջանալի թվացող մարմինների շարան, որ վերացնում են մանկությունն ու սփռում վախ ու սարսափ: Երեխաներ, ովքեր փորձում են փրկվել ու գոյատևել համատարած ոչնչացման պայմաններում: Շուրջը տիրում է անզորության զգացումը, որը միախառնված էր այդ ոճրագործությունից խուսափելու ճանապարհ գտնելու հույսին: Սակայն չկա այդ ճանապարհը, քանի որ կա միայն ոճրագործության շղթան, որը գնալով փոքրանում է՝ խլելով բազմաթիվ մարդկանց կյանքեր: Փրկության ճանապարհ գտնելու ընթացքում երեխաները գտնում են միմյանց ու մի պահ վերագտնում կորցրած մանկությունը:
Միայն մի հոգու է հաջողվում անցնել Դեր Զորը՝ անապատ, որն ականատեսն է մեր կորստի: Ու Ցեղասպանությունը վերապրածը՝ Վանեն, իր հիշողության մեջ մեկընդմիշտ կրելու է կոտորածի սարսափն ու այդպես էլ չապրված կյանքերը և իր անունով, որ խորհրդանշում է Արևմտյան Հայաստանի քաղաքներից մեկը (Վան), մշտապես ապրելու է օտարության մեջ՝ լինելով իր կորուսյալ հայրենիքի մի կտորը:

Եվ Վանեն միշտ կլսի ընդհատված մանկության ընկերների անունները:

**Duration:** 30 min
**Date of the premiere:** October 8, 2015, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Authors and performers of music:** Tiezerk Band
**There are 7 people on the stage.**
**4 soloists**
Mushegh: Tsolak MLKE-Galstyan
Vane: Shoghakat MLKE-Galstyan
Serob, Genocidal Executioner: Petros Ghazanchyan
Grigor (Serob's brother): Invited performer - Aram Alexander Atamian Harvey (USA)
**3 musicians**
Lusine MLKE-Galstyan
Eliza Baghdiyan
Astghik Mamikonyan
**Choreography**
The emphasis is put on sensuality. Emotional experience is in motion, and the whole choreography obtains an accentuated sensual and emotional shades. The actions are inspired by the events, and the events are inspired by reality. And this connection is the link uniting the choreography. Movements are tense, nervous, but at the same time, quiet as inevitability. The big circle of the choreography is based on a childhood game which changed into a movement that reflects the hard situation by being transformed all the time.
**Concept**
Vane, Mushegh, Grigor, Serob: 4 children, whose names are turned from the game to a shout. The reality of the Genocide interrupted this childhood game and turned the childhood into a nightmare. Interrupted human lives and a series of bodies which seems to be endless that eradicate childhood and spreads fears and horror. Children who are trying to escape and survive under the conditions of all-embracing destruction. There is a sense of powerlessness all around, combined with the hope of finding a way to avoid that crime. But there is no way, since there is only a chain of the crime that is getting smaller, taking away many lives. While finding a way to salvation, children find each other and rediscover lost childhood for a moment.
Only one person succeeds in crossing Deir ez-Zor - a desert that witnessed our loss. And the survivor of the genocide, Vane, forever holds in her memory the horrors of the massacre and experienced not-yet-lived-lives and with her name, symbolizing one of the cities of Western Armenia (Van), she will permanently live in a foreign country, being a part of her lost homeland.

And Vane will always hear the names of her interrupted childhood friends.

## Ճանճը

Տարածքը բացահայտող ժամանակակից պար

Ըստ Հրաչյա Գալստյանի համանուն պատմվածքի:

## The Fly

Site-Specific Contemporary Dance Performance

Based on the short story with the same title by Hrachya Galstyan.



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2014 թվականի հոկտեմբերի 7, Երևան, Հայաստան
**Գաղափարի հեղինակ՝** Հրաչյա Գալստյան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ)՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտության հեղինակներ և կատարողներ՝ «**Տիեզերք» բենդ
**Բեմում՝ 5 հոգի:**
**3 մենակատար՝**

Ճանճ՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
Սարդ ներկա՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
Սարդ անցյալ՝ Պետրոս Ղազանչյան
**2 երաժիշտ՝**
Լուսինե Մլքե-Գալստյան
Աստղիկ Մամիկոնյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Կատարումը բաղկացած է մի մտածողությունից, որը բաժանվում է զուգապարի և մենապարի միջև: Թեման ներկայանում է նույն պարամտածողության ձևի մեջ, որը փոխվում է կատարման շնորհիվ: Կենդանական բնազդը վերածվում է շարժման, որը մարդկային մարմնի մեջ ստանում է բացահայտված արձագանք: Բոլոր կատարողների մեջ մի պարային մտածողություն է, որը ձևավորվում է որպես միասնական գործողություն՝ անհատական շեշտադրումներով:
**Գաղափար**
Անցյալն ամբողջովին տիրել է գիտակցությանն ու ներկան դարձրել մղձավանջ՝ ջնջելով անցյալի ու ներկայի միջև եղած բոլոր սահմանները: Իրականության մեջ ժամանակը սառել է մի կետում՝ մի արարքի շրջանակում, ու ամեն ինչ պտտվում է այդ արարքի շուրջ: Հիշողությունների միջոցով փորձ է արվում հասկանալ կատարված ոճրագործության դրդապատճառները: Վերապրելով ամբողջ եղելությունը՝ տեղի է ունենում մարդկայինի ու կենդանականի սահմանների սղում, ինչն առաջնորդում է միայն հաճույք ստանալու մղմանը: Կերպարը վերածվում է Սարդի, իսկ իր արարքը՝ Ճանճին հոշոտելը սարդոստայնում:
Գիտակցելով կատարվածի ամբողջ զարհուրելիությունը և միևնույն ժամանակ տեսնելով սեփական հրեշավոր էությունը՝ փորձ է արվում համոզել ինքն իրեն, որ սեփական բնույթն այլ է, ու այս ամենը միայն անցյալի դրսևորումներն են: Սակայն անընդհատ վերապրելով սեփական անցյալը՝ գալիս է գիտակցում, որ էությունը նույնն է մնացել, ու անցյալի հրեշը կազմում է Ես-ի մի մասը:
Ստեղծվում է մի անլուծելի ներքին հակասություն. հնարավոր չէ ներել սխալներն ու ազատվել անցյալից: Անցյալը դանդաղ սպանում է ներկան, ու անցյալից ազատագրվելը դառնում է միակ ցանկությունը:

Օրը թեքվել էր, արև չկար, այն ժամն էր, երբ լուսաբացի ու մայրամուտի գույները նույնն են:

*Հրաչյա Գալստյան*

**Duration:** 30 min
**Date of the premiere:** October 7, 2014, Yerevan, Armenia
**Author of the concept:** Hrachya Galstyan
**Choreographer:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Authors and performers of music:** Tiezerk Band
**There are 5 people on the stage.**
**3 soloists**
Fly: Shoghakat MLKE-Galstyan
Spider Present: Tsolak MLKE-Galstyan
Spider Past: Petros Ghazanchyan
**2 musicians**
Lusine MLKE-Galstyan
Astghik Mamikonyan
**Choreography**
The performance consists of a thinking that is divided between solo dance and pair dancing. The topic is presented in the same choreography, which is being changed due to performance. The animal instinct is transformed into a movement that is getting a reflection revealed in the human body. All performers have the same choreography being shaped as a united action with individual accents.
**Concept**
Past has completely dominated consciousness and has made the present a nightmare, erasing all the boundaries between past and present. In reality, time has frozen in one point, within the frames of one act and everything is turning around it. Through memories, an attempt is made to understand the motivations of the committed crime. Experiencing what happened in the past, the reduction of the bounds of the human and the animal happens, which only leads to the urge of having pleasure. The character turns into the Spider, and his action turns into tearing the Fly to pieces in a spider's web.
Realizing the whole horror of the incident and, at the same time, seeing his monstrous essence, an attempt is made to convince himself that his nature is different, and all this is only manifestations of his past. But, constantly experiencing his own past, he realizes that his essence remains the same and the monster of the past is part of himself.
An unsolvable inner contradiction is being created: it is impossible to forgive mistakes and get rid of the past. Past slowly kills the present and liberation from the past becomes the only desire.

The day was over. The sun disappeared. It was the time when the colors of the dawn and the sunset were the same.

Hrachya Galstyan

## Առանց ստի

Տարածքը բացահայտող ժամանակակից պար

## No More Lies

Site-Specific Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2014 թվականի փետրվարի 25, Երևան, Հայաստան
**Ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Պարաբեմադրիչներ (խորեոգրաֆներ)՝** Ցոլակ Մլքե-Գալստյան, Շողակաթ Մլքե-Գալստյան, Պետրոս Ղազանչյան
**Բեմի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Կենդանի երաժշտության հեղինակներ՝** Մուհամմադ Մոազանի, Լուսինե Մլքե-Գալստյան, Արազ Իսմայելի, Աստղիկ Մամիկոնյան
**Բեմում՝ 7 հոգի:**
**3 մենակատար՝**
Ճշմարտախոս՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
Ճշմարտախոս՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
Ճշմարտախոս՝ Պետրոս Ղազանչյան
**4 երաժիշտ՝**
Մուհամմադ Մոազանի
Լուսինե Մլքե-Գալստյան
Արազ Իսմայելի
Աստղիկ Մամիկոնյան

**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**

Շարժումները տարածքի մեջ են: Կատարողը սահմանափակված է տարածքով, բայց միևնույն ժամանակ այդ սահմանափակումը բերում է նոր պարաձևերի բացահայտմանը:
Պարամտածողությունը շատ է հենվում կատարողի՝ տարածքից ոգեշնչվող իմպրովիզացիայի վրա: Շարժումները ձգտում են դեպի վերև, և նյութը դառնում է շարժման շարունակությունը, իսկ իրը՝ մարմնի մի մաս: Պարն ունի չորս բաղադրիչ՝ տարածք, իր, նյութ, մարմին:

**Գաղափար**

Մենք խոսում ենք այն ստի մասին, որն ամենուր է ու այնքան է ներթափանցել հանրության ու անհատի կյանք, որ վերածվել է ճշմարտության բոլորի համար: Ստի կրողները դարձել են Ճշմարտախոսներ ու կառուցում են սուտը՝ երբեմն սթափվելով ու փորձելով հաղթահարել այն:
Ճշմարտախոսներից մեկը հանրության ստի սարդոստայնի մեջ է ու փորձում է քանդել այն ու ազատվել սարդոստայնից: Սակայն նա հանրության անդամ է, ու պայքարի արդյունքը պարտությունն է, որովհետև հանրության մյուս անդամները նրան անընդհատ ներքաշելու են ստի մեջ:
Սուտն անընդհատ ավելանում է, ու նրանով է լցված Ճշմարտախոսների կյանքն ու ամբողջ էությունը: Սուտը ստեղծում է փակ ու լիքը տարածություն, որը չունի ելքեր ու խեղդում է իր մեջ գտնվողներին: Սուտն անընդհատ առկա է ու ստեղծում է նոր ստեր: Յուրաքանչյուրն իր ստի կրողն է, ու չկա ձև՝ այդ ստից ազատվելու:
Ստի ամենահզոր ու վտանգավոր ձևն ինքնախաբեությունն է, քանի որ տալիս է կեղծ հանգստություն ու ժամանակավորապես ոչնչացնում ցավալի ճշմարտությունը: Սակայն ինքնախաբեությունն անէանում է մեկ այլ ստի բացահայտումից, ու մնում է միայն ընտրել կա՛մ մենակությունը, կա՛մ մեկ այլ սուտ:
Սուտն այնքան է սեղմում իրենով ապրողներին, որ դառնում է մի ճաղավանդակ, որի ձևը փորձում են ամեն կերպ փոխել, դուրս գալ դրանից: Երբեմն հաջողվում է ճաղավանդակից դուրս պրծնել, սակայն վերջնական ելքը հնարավոր չի գտնել, որովհետև շուրջն ամեն ինչ պատված է ստով:

Սա ստի քաղաքակրթությունն է:

**Duration:** 30 min
**Date of the premiere:** February 25, 2014, Yerevan, Armenia
**Author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Choreographers:** Tsolak MLKE-Galstyan, Shoghakat MLKE-Galstyan, Petros Ghazanchyan
**Design of the stage:** Tsolak MLKE-Galstyan
**Authors of live music:** Mohammad Moazzeni, Lusine MLKE-Galstyan, Araz Esmaeili, Astghik Mamikonyan
**There are 7 people on the stage.**
**3 soloists**
The Truthful: Tsolak MLKE-Galstyan
The Truthful: Shoghakat MLKE-Galstyan
The Truthful: Petros Ghazanchyan
**4 musicians**
Mohammad Moazzeni
Lusine MLKE-Galstyan
Araz Esmaeili
Astghik Mamikonyan
**Choreography**
Movements are in space. The performer is restricted by space, but at the same time, this limitation brings to the discovery of new forms of dance.
Choreography is mainly based on a performer's improvisation inspired by space. Movements seek to go upward and the material becomes the continuation of the movement. The object becomes a part of the body. The dance has four components: space, object, material, body.
**Concept**
We are talking about lies that are everywhere and so entangled in the lives of the society and individuals that have turned into the truth for all. The ones, who carry lies, have become The Truthful ones and build lies, sometimes waking up and trying to overcome it.
One of The Truthful people is in the spider's web of lies of the society and tries to destroy it and get rid of the spider's web. However, he is a member of the society and the result of the struggle is a defeat, because all the other members of the society will always pull him into the lies.
The number of lies is constantly increasing, and the whole life and essence of The Truthful people is filled with it. The lie creates a closed and full space, which does not have exits and suffocates those within it.
Lies are always there and create new lies. Everyone is the carrier of their lies and there is no way to get rid of those lies.
The most powerful and dangerous form of lies is self-deception, because it gives false comfort and temporarily destroys the painful truth. But self-deception is disappearing as a result of the revelation of another lie and it remains only to choose either loneliness or another lie.
Lies are pressing so much on those, who live with it, that they become a cage, the form of which they are trying to change and get out of it in every way. Sometimes they succeed in getting out of the cage, but the final exit cannot be found, because everything around is covered with lies.

This is the civilization of lies.

# Մենակության ձայնը

Շարժման երաժշտություն

# The Sound of Loneliness

Music of Movement



**Տևողությունը՝** 40 րոպե
**Առաջնախաղը՝** 2013 թվականի հոտեմբերի 5, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** հատուկ մեղեդիների ստեղծող՝ Վաչե Ղարիբյան
**Բեմում՝ 3 հոգի:**
**3 մենակատար՝**
Մենակություն՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
Բանտարկյալ՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
Բանտապահ՝ Պետրոս Ղազանչյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Շարժման երաժշտություն
Սա հեղինակային մոտեցում է, որի հիմքում ընկած է պարողի ազատագրումը երաժշտության տիրապետող ուժից: Շարժումը լռության մեջ չէ, հակառակը, շարժումն է դառնում տիրապետողը երաժշտության: Շարժմանը տրված է որոշման հնարավորություն ձայնի ստեղծման մեջ:
Շարժման երաժշտության գործիքներով ստանում ենք այն տարածքը, որի մեջ կատարողը վերածվում է ոչ թե երաժշտություն լսող ու վերարտադրողի, այլ մարդու, ով երաժշտության հետ սերտաճում է, և երաժշտությունը շարունակությունն է իր շարժումների: Սա ստեղծագործական ճանապարհ է. պարը հանել մի նոր հարթություն, որտեղ կատարողը ազատագրվում է երաժշտությունից՝ դառնալով շարժման երաժշտությունը ստեղծող:
**Գաղափար**
Մենակությունը տեսանելի է և զգայական: Բանտապահին ու բանտարկյալը բաժանված են ճաղերով ու միավորած են Մենակությամբ: Բանտարկյալը դատապարտված է անխուսափելի մենակության, որը տիրում է նրա ամբողջ էությանը: Նա մեկընդմիշտ զգալու է Մենակության անտանելի ներկայությունը, քանի որ դա անազատության միակ ուղեկիցն է: Բանտապահը պայքարում է Մենակության դեմ իր ազատության մեջ, բայց վերջիվերջո մենակությունը տիրում է նաև նրան:
Մենակությունը դառնում է միակ զգացումը, որ կա նրանց իրականության մեջ: Բանտապահը փորձում է թոթափել Մենակության ցավը դաժանության միջոցով: Սակայն Մենակության զգացումն ավելի է խորանում: Մի պահ Բանտարկյալը հաշտվում է իր Մենակության հետ ու վայելում դրա պատճառած ցավը: Սա Մենակության գծած շրջանն է, որտեղ Մենակության տիրապետությունն է, որն անվերջանալի է ու ոչնչով չի կարող տապալվել: Նրանք հավերժ կապված են միմյանց հետ Մենակության հյուսած թելերով: Նրանք գտնվում են նույն կարգավիճակում, քանի որ Մենակությունը պայմանավորված չէ ազատությամբ ու անազատությամբ ու հանդիսանում է մարդու գոյության անբաժանելի մասը:
Մենակությունը Բանտարկյալի իրականության վկան է ու միևնույն ժամանակ դառնում է Բանտապահի ապագայի մշտական ուղեկիցը:

Մենակությունը միակ զգացմունքն է, որը երբեք քեզ չի թողնի մենակ:

**Duration:** 40 min
**Date of the premiere:** April 7, 2013, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Vache Gharibyan - a creator of the special melodies
**There are 3 people on the stage.**
**3 soloists**
Loneliness: Shoghakat MLKE-Galstyan
Prisoner: Tsolak MLKE-Galstyan
Turnkey: Petros Ghazanchyan
**Choreography**
Music of Movement
This is an authorial approach, based on the liberation of dance from the power of music. The movement is not in silence, on the contrary, the movement dominates over the music. The movement becomes a decision-maker in the creation of a sound.
With the instruments of music of movement, we get the space in which the performer doesn't turn into a listener and a reproducer of music but into people who accrete with music, and music is the continuation of their movements. This is a creative way: to take dance to a new dimension, where the performer is liberated from music, becoming the creator of music of movement.
**Concept**
Loneliness is visible and sensual. Turnkey and Prisoner are being divided with bars and are united with Loneliness. Prisoner is doomed to an inevitable Loneliness and his being is possessed by it. He will feel the unbearable presence of Loneliness once and for all, as it is the only companion of imprisonment. Turnkey struggles against Loneliness in his freedom, but eventually Loneliness possesses over him too.
Loneliness becomes the only feeling that exists in their reality. Turnkey is trying to throw off the pain of Loneliness through cruelty. But the feeling of Loneliness is getting deeper. For a moment, Prisoner is reconciled with his loneliness and enjoys the pain which it causes. This is the circle drawn by Loneliness in which the domination of Loneliness is endless and cannot be crushed down by anything. They are eternally tied to each other with the threads knitted by Loneliness. They are in the same situation, as Loneliness is not conditioned by freedom and imprisonment - it is an integral part of human existence.
Loneliness is the witness of Prisoner's reality and, at the same time, becomes the permanent companion of Turnkey's future.

Loneliness is the only feeling that will never leave you alone.

## Մտքերի երկխոսություն

Բացօթյա ժամանակակից պար

## Conversation of Thoughts

Open-Air Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2012 թվականի հունիսի 13, Պերմ, Ռուսաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Յոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Ֆիլիպ Գլաս, Դեդ Քեն Դենս, Մայքլ Նյուման, Ապոկալիպտիկա, Անտոնիո Վիվալդի, Արվո Պարթ, «Քրոնոս» քառյակ
**Բեմում՝ 6 հոգի:**
**6 մենակատար՝**
Թեթև մտքեր՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
Թեթև մտքեր՝ Պետրոս Ղազանչյան
Անհասկանալի մտքեր՝ Յոլակ Մլքե-Գալստյան
Անհասկանալի մտքեր՝ Նարիա Քոլոզյան
Ծանր մտքեր՝ Էլեն Պետրոսյան
Ծանր մտքեր՝ Սաթենիկ Մարգարյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Միասնական շարժումները դառնում են անհատական և միևնույն ժամանակ չեն կորցնում միասնականությունը: Երբ որ շարժումը սկսվում է, արձագանքվում է բոլոր կատարողների մեջ անհատական պարամտածողությամբ: Բացահայտվում է միասնական պարամտածողության ու անհատական պարամտածողության հակադրությունը, և համադրվում են անհամադրելի կատարողական ոճերը: Նյութը դառնում է պարի տեսողական տարրը, որը վերափոխում է և բերում եթերայնություն շարժմանը:
**Գաղափար**
Մտքերը գոյություն ունեն առանձին ու օժտված են հստակ արտահայտված անհատական գծերով: Կան երեք տեսակի մտքեր: Թեթև մտքեր, որոնք դարձնում են մտածողությունը բացարձակ թեթև: Ծանր մտքեր, որոնք դարձնում են մտածողությունը բացարձակ ծանր: Անհասկանալի մտքեր, որոնց ժամանակ մտածողությունը գտնվում է գիտակցության և անգիտակցականի արանքում:
Թեթև մտքերը փորձում են հաստատել իրենք իրենց՝ ցույց տալով, որ իրենց միջոցով տարածվում է ամբողջ դրական կենսական ուժը: Ծանր մտքերը ցույց են տալիս, որ, չնայած այն հանգամանքին, որ իրենք առաջացնում են շատ հարցեր, այնուամենայնիվ, օժտված են մեծ խորությամբ: Անհասկանալի մտքերը ցույց են տալիս, որ առեղծվածային ու ստեղծագործ բնույթ ունեն, ու դրանով է շարունակվում գոյությունը:
Պարբերաբար մտքերը կարողանում են հաստատել իրենց իշխանությունը գլխի մեջ ու դառնալ թելադրող տարր: Մտքերը ներգործում են միմյանց վրա և հանում են միմյանց իրենց մաքուր վիճակից: Ու այս տարածքում էլ ձևավորվում է մտածողությունը: Մտքերը օղակ են կազմում ու շղթայված և կապված են միմյանց հետ: Նրանք սկսում են գործել համահունչ ու հաջորդաբար փոխարինում են միմյանց՝ դարձնելով մտածողությունը ավելի ներդաշնակ ու ամբողջական:
Մտքերը գոյություն ունեն տարածության մեջ ու միայն մեր գլխի մեջ միավորվելով են ստեղծում մտածողությունը:

Մտքերն ապրում են անկախ, բայց մտածողությունը միայն գլխում է:

**Duration:** 30 min
**Date of the premiere:** June 13, 2012, Perm, Russia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Philip Glass, Dead Can Dance, Michael Newman, Apocalyptica, Antonio Vivaldi, Arvo Pärt, Kronos Quartet
**There are 6 people on the stage.**
**6 soloists**
Light Thoughts: Shoghakat MLKE-Galstyan
Light Thoughts: Petros Ghazanchyan
Unintelligible thoughts: Tsolak MLKE-Galstyan
Unintelligible thoughts: Naira Kolozyan
Heavy Thoughts: Elen Petrosyan
Heavy Thoughts: Satenik Margaryan

**Choreography**

United movements become individual and, at the same time, do not lose unity. Whenever a movement starts, it is responded to in all performers by individual choreography. The contrast between the united and individual choreography is evident and incompatible performance styles are being combined. The material becomes a visual element of a dance that transforms and brings ethereality to the movement.

**Concept**

Thoughts exist separately and are endowed with clear individual characteristics. There are three types of thoughts: Light thoughts that make thinking absolutely light. Heavy thoughts that make thinking absolutely hard. Unintelligible thoughts, when thinking is between consciousness and unconsciousness.

Light thoughts are trying to establish themselves, showing that through them all the positive vital forces exist. Heavy thoughts show that, despite the fact they cause many questions, they are endowed with great depth. Unintelligible thoughts show that they have mysterious and creative essence and the existence continues with it. Periodically, thoughts are able to establish their power in the head and become a dictating element. The thoughts influence each other and remove each other from their pure state, and thinking is shaped in this area. The thoughts create a ring and are chained and tied together. They begin to act in harmony and successively substitute for one another, making the thinking more harmonious and complete.

Thoughts exist in space and only being united in our minds they create thinking.

Thoughts are independent, but thinking is only in the head.

## Զինվորներ

Ժամանակակից պար

## Soldiers

Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2012 թվականի հոկտեմբերի 4, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Յոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Ժան Բատիստ Լյուլի
**Բեմում՝ 2 հոգի:**
**2 մենակատար՝**
Զինվոր՝ Յոլակ Մլքե-Գալստյան
Զինվոր՝ Պետրոս Ղազանչյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Պարամտածողությունը ոգեշնչված և կառուցված է սուր ծակող զենքերի շարժումներից: Շարժումը հարվածի անցումն է երաժշտության, որը սուր և կոպիտ պարամտածողությունը բերում է միաձուլման տղամարդկային պայքարի հետ: Արագությունը կառուցվում է դադարներից և համախմբում է իր մեջ շարժումը երաժշտության շրջանակներից դուրս:
**Գաղափար**
Սա մի պատերազմ է, որը ստիպում է մարդկանց պայքարել հանուն արհեստական կարևորություն ստացած արժեքների, որոնք ամբողջովին վերանում են կռվի դաշտում ու պատերազմը դարձնում ինքնանպատակ: Կռվի դաշտում այս զինվորները գիտակցում են ամեն ինչի անցողիկությունն ու այլևս չունեն ո՛չ հայրենիք, ո՛չ դրոշ, ո՛չ արժեքներ: Պատերազմում կյանքն արժեզրկվում է, ու ամեն ինչ կորցնում է իմաստը: Կռիվը դարձել է սովորություն ու նրանց ապրելու միակ ձևը: Զինվորները կռվում են իրար դեմ, որովհետև բացի կռվելուց ոչինչ չգիտեն և բացի պատերազմից ոչինչ չեն տեսել: Մահվան և կյանքի արանքում նրանց հասու է միայն անվերջանալի պայքարը, որը դարձել է խաղ:
Ամենուրեք արյուն է, որն անընդհատ հոսում է: Այս արյունը չունի սկիզբ, չունի վերջ: Դա անվերջանալի մի նյութ է, որի մարդկային բնության գաղափարը նրանք կորցրել են և գտնվում են կիսախելագար իրականության մեջ, որտեղ արյունը հերթական խաղալիքն է:
Իրականում զինվորները նույնիսկ իրար թշնամիներ չեն, այլ իրար շատ նման, դաժան կենսագրություն ունեցող մարդիկ, ովքեր դուրս են եկել իրար դեմ, և կռվելու են առանց խղճահարության և մինչև վերջ: Ավարտը մեկն է՝ եղբայրական գերեզման զինվորների համար:

Չկան թշնամիներ. կա պատերազմ, որը ծնում է թշնամիների**:**

**Duration:** 30 min
**Date of the premiere:** October 4, 2012, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Jean-Baptiste Lully
**There are 2 people on the stage.**
**2 soloists**
Soldier: Tsolak MLKE-Galstyan
Soldier: Petros Ghazanchyan

**Choreography**

The choreography is inspired by and built on the movements of the sharp cutting weapons. The movement is a transition of a beat to the music, which merges sharp and rough choreography with manly struggle. The speed is built on pauses and unites with movement beyond the frames of music.

**Concept**

This is a war that forces people to fight for artificial values that are being completely eliminated in the battlefield and make the war an end in itself. On the battlefield, these soldiers realize the transitivity of everything and no longer have a homeland, a flag, or values. In the war, life is devalued and everything loses its meaning. The fight has become a habit and the only way to live. The soldiers fight against each other because besides fighting, they do not know anything, and besides war, they have not seen anything. They know only the endless struggle between death and life, which has become a game.

Blood is everywhere, which constantly flows. This blood has no beginning, no end. It's an endless substance, and they have lost the idea of human nature of it: they are in a half-crazy reality where blood is another toy.

In reality, the soldiers are not even enemies, but the people, who are alike, people with a very cruel biography, who have come out against each other and will fight without pity and till the end. The end is one: a brotherly grave for the soldiers.

There are no enemies: there is a war that gives rise to enemies.

# Պիեսներ մահվան մասին
# Ինքնասպանը
ժամանակակից պար

# Plays about Death
# The Suicidal
Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 15 րոպե
**Առաջնախաղը՝** 2011 թվականի հոկտեմբերի 6, Երևան, Հայաստան
**Ներկայացման գաղափարի հեղինակ՝** Յոլակ Մլքե-Գալստյան
**Պարաբեմադրիչներ (խորեոգրաֆներ)՝** Յոլակ Մլքե-Գալստյան, Նաիրա Քոլոզյան, Պետրոս Ղազանչյան
**Բեմի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Յոհան Սեբաստիան Բախ, Ապոկալիպտիկա, ԴախաԲրախա
**Մենակատար՝**
Ինքնասպան՝ Նաիրա Քոլոզյան (2011)
Ինքնասպան՝ Պետրոս Ղազանչյան (2013)
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Պարամտածողություն, որը հենված է շրջանի վրա, ինչն էլ կրկնվող շարժումների մեջ է ամփոփում պարը: Քայլերը կառուցվում են փափուկի և դանդաղի համադրությամբ, չորի մեջ:
**Գաղափար**
Վախը կյանքից բերում է անխուսափելի մահվան մասին մտածելուն, և այդ մտքերը վերածվում են գործողությունների: Ինքնասպանն ունակ չէ զգալ կյանքի լուսավոր կողմերը. նա մթության մեջ է, որն ավելի ու ավելի է խտանում ու դառնում կործանարար: Ինքնասպանն իրականում չի ապրում, նա վախենում է: Ինքնասպանն, անընդհատ պայքարելով վախերի դեմ, զգում է, որ ի սկզբանե պարտված է այդ խաղում, քանի որ վախը նրա պաշտպանության միակ միջոցն է: Վախենալով կյանքից՝ նա ժխտում է այն ու ամբողջ սրտով ձգտում մահվան: Նրա միակ նպատակը ինքնաոչնչացումն է, ու նրա մեջ ապրել ցանկացող բոլոր մասնիկները դանդաղ մեռնում են: Վախերն ավելի են շատանում և ուժեղանում, քանի որ դրանք պետք են Ինքնասպանին՝ կյանքից պաշտպանվելու համար:
Նա մեկընդմիշտ պարտված է կյանքի դեմ մղվող պայքարում, ու միակ փրկությունը մահն է: Ու այս ամենը բերում է վերջնական որոշման. ավարտել այս անիմաստ և հրեշավոր գործընթացը, որը կոչվում է կյանք: Ինքնասպանը գերադասում է մահը՝ առանց վախի, քան թե կյանքը՝ վախերով պատված:

Վախերդ սպանելու ժամանակ կարող ես սպանել նաև ինքդ քեզ:

**Duration:** 15 min
**Date of the premiere:** October 6, 2011, Yerevan, Armenia
**Author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Choreographers:** Tsolak MLKE-Galstyan, Naira Kolozyan, Petros Ghazanchyan
**Design of the stage:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Johann Sebastian Bach, Apocalyptica, DakhaBrakha

**Soloist**

The Suicidal: Naira Kolozyan (2011)
The Suicidal: Petros Ghazanchyan (2013)

**Choreography**

Choreography, which is based on the circle, which summarizes the dance in the repetitive movements. The steps are built in combination with the smooth and the slow in the dry.

**Concept**

Fear from life brings to the thinking about the inevitable death, and these thoughts turn into action. The Suicidal is not able to feel the bright side of life: he is in the darkness, which is getting darker and becomes more destructive. The Suicidal does not really live, he is scared. The Suicidal, constantly struggling with fears, feels that he is defeated in that game from the beginning, because fear is the only means of his defense. Fearing from life, he denies it and yearns for death with all his heart. His only purpose is self-destruction and all the particles in him wanting to live are slowly dying. Fears become more and more intense, as the Suicidal needs them for being protected from life.

He is defeated forever in the struggle against life, and the only salvation is death, and all this leads to a final decision: finish this useless and monstrous process, called life. The Suicidal prefers death without fear, rather then life covered with fears.

You can kill yourself while killing your fears.

## Պիեսներ մահվան մասին
## Մարդասպանը

ժամանակակից պար

## Plays About Death
## The Murderer

Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 15 րոպե
**Առաջնախաղը՝** 2011 թվականի հոկտեմբերի 6, Երևան, Հայաստան
**Ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ)՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Անտոնիո Վիվալդի, «Քրոնոս» քառյակ
**Մենակատար՝**
Մարդասպան՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Չավարտվող շարժում, որը չունի վերջակետեր, այլ ունի ստորակետներ, որոնք փոխում են շարժման ուղղությունը, ոչ թե ձևը: Պարի բովանդակությունն ու արագությունն այն նյարդի մեջ են, որը երաժշտությամբ բացահայտում է թեման:
**Գաղափար**
Սա աշխատանք չէ: Սա յուրովի պայքար է մարդու և մահվան, որտեղ Մարդասպանն ուզում է ապացուցել ինքն իրեն, որ անզոր չէ մահվան դիմաց, և ճանապարհը, որով Մարդասպանը փորձում է դա ցույց տալ, սպանությունն է: Նա սպանում է, քանի որ միայն այդպես կարող է ժամանակավորապես հաղթել մահվանն ու զգալ կյանքը: Նա ամեն գնով ուզում է զգալ իր կենդանությունն ուրիշի մահվան միջոցով: Մարդասպանը դառնում է սպանության գործիք, որ կենդանի է մնում միայն ուրիշներին մահ պատճառելու միջոցով: Սակայն նա իրականում գիտակցում է, որ այս ամենն անխուսափելիորեն բերելու է հենց իր մահվանը:
Եվ Մարդասպանի ամենամեծ ցանկությունն է՝ վերածվել մահն իրականացնող գործիքի:

Կյանքը՝ որպես պայքար մահվան դեմ, և մահը՝ որպես աշխատանք:

**Duration:** 15 min
**Date of the premiere:** October 6, 2011, Yerevan, Armenia
**Author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Choreographer:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Antonio Vivaldi, Kronos Quartet
**Soloist**
The Murderer: Tsolak MLKE-Galstyan
**Choreography**
An unending movement that does not have full stops, but has commas that change the direction of the movement rather than the form. The content and speed of the dance is in the nerve, which reveals the theme through music.
**Concept**
This is not work. This is a struggle between a human being and death, where the Murderer wants to prove to himself that he is not powerless against death, and the path, through which the Murderer is trying to show it, is a murder. He kills as he can temporarily defeat death and feel life only by this. He wants to feel his vitality through the death of someone else. The Murderer becomes an instrument of murder, who survives only by causing death to others. However, he realizes that all this will inevitably bring to his death, and the Murderer's greatest desire is to be turned into an instrument causing death.

Life as a struggle against death and death as a work.

## Պիեսներ մահվան մասին
## Մահացու հիվանդը

Ժամանակակից պար

## Plays About Death
## The Mortally Ill

Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 15 րոպե
**Առաջնախաղը՝** 2011 թվականի հոկտեմբերի 6, Երևան, Հայաստան
**Ներկայացման գաղափարի հեղինակ՝** Յոլակ Մլքե-Գալստյան
**Պարաբեմադրիչներ (խորեոգրաֆներ)՝** Յոլակ Մլքե-Գալստյան, Շողակաթ Մլքե-Գալստյան
**Բեմի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Լիզա Ջերարդ
**Մենակատար՝**
Մահացու հիվանդ՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Շարժումներ, որոնք գալիս են մտքերից և ոգեշնչվում են սեփական մահվան պատկերացումից: Պարը հիշեցնում է անզգայացած մարմին, որը ցավից հյուծված շարժումների ձևն է ընդունում:
**Գաղափար**
Մահացու հիվանդը կանգնած է իր կյանքի եզրին. դադարել է պայքարել մահվան դեմ: Նրան ամբողջովին տիրել են հուսահատությունն ու համապարփակ ցավը: Նա չունի հավատ, ինչն էլ Մահացու հիվանդին զրկել է ապրելու կամքից: Նա հավատում է, որ իրեն մահ է սպասվում: Նա գնում է դեպի մահը՝ անընդհատ գտնելով մահվան անխուսափելիության ապացույցները: Ետևում ապրած կյանքն անհրապույր և անդուր էր, և հիմա դաժան և անխուսափելի մահն է: Միակ միտքը, որ նրան առաջնորդում է, մահվան միջոցով ցավով լի կյանքից ազատագրում գտնելն է. նա սկսում է ամբողջ ուժով կառչել ցավից ազատվելու գաղափարից: Ցավը տանջում է, և միակ փրկությունը անզգայացումն է, որն էլ հենց հրապուրում է Մահացու հիվանդին մահվան մեջ:

Մահն անխուսափելի ազատագրում է ամեն ինչից:

**Duration:** 15 min
**Date of the premiere:** October 6, 2011, Yerevan, Armenia
**Author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Choreographers:** Tsolak MLKE-Galstyan, Shoghakat MLKE-Galstyan
**Design of the stage:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Lisa Gerrard
**Soloist**
The Mortally Ill: Shoghakat MLKE-Galstyan
**Choreography**
Movements that come from thoughts and are inspired by the perspective of personal death The dance reminisces an anesthetized body that accepts the form of the movements exhausted from the pain.
**Concept**
The Mortally Ill stands at the edge of her life and has stopped fighting against death. She is completely possessed with despair and all-embracing pain. She does not have faith, which has deprived the Mortally Ill of the will to live. She believes that only death waits for her in future. She is going towards death, constantly finding the evidence of inevitability of death. The life, that is behind, was unpleasant and unattractive, and now there is only cruel and inevitable death. The only thought that leads her is to find liberation from the pain through death: she begins to cling to the idea of getting rid of the pain. The pain is excruciating and the only salvation is anaesthetization, which is seducing the Mortally Ill in death.

Death is an inevitable liberation from everything.

## Սև ամրոց

Բացօթյա ժամանակակից պար

Ոգեշնչված է իրական քաղաքական իրադարձություններից,

որոնք տեղի են ունեցել Հայաստանում 2008 թվականի մարտի 1-ին:

## Black Castle

Open-Air Contemporary Dance Performance

This performance is inspired by the real political events

that took place on March 1, 2008 in Armenia.



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2010 թվականի օգոստոսի 11, Ծաղկաձոր, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի ձևավորումը՝** Հրաչյա Գալստյանի
**Հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Ապոկալիպտիկա, Դեդ Քեն Դենս, Սնոթ
**Բեմում՝ 6 հոգի:**
**6 մենակատար՝**
Թագակիր՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
Թագակիր՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
Թագակիր՝ Նաիրա Քոլոզյան (2010), Պետրոս Ղազանչյան (2012)
Թագակիր՝ Էլեն Պետրոսյան (2010), Ադամ Խալաթյան (2016)
Թագակիր՝ Վարդան Դավթյան (2010), Կառլեն Կարապետյան (2016)
Թագակիր՝ Գոռ Հակոբյան (2010), Սաթենիկ Մարգարյան (2012), Նարեկ Ալեքսանյան (2016)
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Հիմնական պարամտածողությունը պարողի և մետաղային ձևավորման միասնական շարժումն է, որի մեջ կա ֆիզիկական թատրոնի տարր: Մետաղային ձևավորումը հանդիսանում է պարամտածողության ոգեշնչման աղբյուր: Չոր և կոպիտ շարժումները և ձգումները շարունակում են մետաղի ձևը, և շարժումը չի քարանում, երբ որ մտնում է մետաղի մեջ: Այն վերափոխվում է ուժի, որն էլ դառնում է զգացմունք:
**Գաղափար**
Ներկայացումը նվիրված է 2008 թվականի մարտի 1-ին Երևանում տեղի ունեցած քաղաքական դեպքերին՝ ընդդիմադիր և պետական ուժերի բախումներին:
Չկա ժամանակ, չկա պետություն: Կան ամեն գնով իշխանության ձգտող մարդիկ, և նրանք միասին կառուցում են իրենց սև հոգիներից լուսավորված ամրոցը, որն ի վերջո կբերի անխուսափելի կործանման:
Իշխելու բնազդն ամբողջ ուժով տիրել է զանգվածային դավադրության մասնակիցներին, ովքեր ուզում են զգալ իշխանության տված ամենակարողությունը, որի խորհրդանիշն է թագը: Իշխանությանը հատուկ ուժը, որը մյուսների կյանքն ու մահը տնօրինելու պատրանք է ստեղծում, դրդում դավադիրներին դիմելու ամեն միջոցի ու ստանալու թագը: Ու այդ մոլուցքը սպանում է իշխանության ձգտողների մեջ մարդկայինն ու ստեղծում կերպարներ, որոնք սկսում են պատերազմ բոլորը բոլորի դեմ՝ հանուն գերիշխանություն հաստատելու:
Չկան իրական թագավորներ, կան էակներ, ովքեր կրում են թագը: Թագակիրները սկսում են հաջորդաբար տիրել գահին: Թագակիրներից ոմանք օգտագործում են հերոսականության գաղափարն ու դառնում թագի տիրակալը: Բնությունից ավելի ռազմավարական մտածելակերպ ունեցողներն օգտվում են մյուսների թուլություններից ու հասնում գահին: Ովքեր գիտեն բռնի ուժով ձեռք բերված իշխանության վտանգները, ստեղծում են վախի ամբողջատիրական համակարգն ու գերահսկողության միջոցով փորձում պաշտպանել իրենց հաստատած իշխանությունը կամ ստեղծում են խորհրդանիշներ, որոնք կհավերժացնեն իրենց:
Իշխանություն ունենալու պատրանքը կուրացրել է բոլորին ու ստեղծել մի քաոսային իրավիճակ, որում այլևս չկա վերահսկողություն, ու բոլոր թագակիրները տիրակալներ են: Նրանք այնքան են իշխանության գաղափարի մեջ, որ այլևս չեն իշխում, սակայն նրանցից յուրաքանչյուրին թվում է, թե ինքն անգերազանցելի ու միակ թագավորն է: Նրանք մոռացել են, որ ի սկզբանե կա մի տիկնիկավար, ով օգտագործում է բոլորին՝ իր իշխանությունը պահպանելու համար: Մշտական պատերազմը շարունակվում է, բայց դրա վերջը բացարձակ անկումն ու կործանումն են:
Թագակիրներից մեկը գիտակցում է, որ չկա իշխանություն, կա միայն իշխանության պատրանքը: Նա գնում է ինքնազոհաբերության, սակայն մահանում են նաև մնացած թագակիրները, քանի որ իշխանության համար միշտ վճարում են ամենաթանկ գինը:

Մեր պայքարն ավարտվեց. Ձեր հերթն է:

**Duration:** 30 min
**Date of the premiere:** August 11, 2010, Tsaghkadzor, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage:** Hrachya Galstyan
**Design of dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Apocalyptica, Dead Can Dance, Snot
**There are 6 people on the stage.**
**6 soloists**
Crown Bearer: Tsolak MLKE-Galstyan
Crown Bearer: Shoghakat MLKE-Galstyan
Crown Bearer: Naira Kolozyan (2010), Petros Ghazanchyan (2012)
Crown Bearer: Elen Petrosyan (2010), Adam Khalatyan (2016)
Crown Bearer: Vardan Davtyan (2010), Karlen Karapetyan (2016)
Crown Bearer: Gor Hakobyan (2010), Satenik Margaryan (2012), Narek Aleksanyan (2016)

**Choreography**

The main choreography is the unified movement of dancers and a metal formation, in which there is an element of the physical theatre. The metal formation is a source of inspiration for the choreography. Dry and rough movements and stretches continue the form of the metal and the movement does not freeze when it enters the metal. It is transformed into a force that becomes a feeling.

**Concept**

The performance is dedicated to the political events that took place in Yerevan on the 1st of March, 2008 - to the clashes between the opposition and state forces.
There is no time, there is no state. There are people who seek power at every cost, and together they build a castle enlightened by their black souls, which ultimately will lead to an inevitable destruction.
The instinct of power possesses over the participants of mass conspiracy with all its strength and they want to feel the omnipotence given by the power, the symbol of which is the crown. The force specific to power that creates an illusion of controlling the lives and deaths of others, causes the conspirators to resort to every means and get the crown. And that obsession kills the human in them in the pursuit of power and creates the characters that start war against everyone, for the sake of supremacy.
There are no true kings, there are creatures who bear the crown. The Crown Bearers begin to dominate the throne. Some of the Crown Bearers use the idea of heroism and become the ruler of the crown. Those, who have more natural strategic thinking, use the weaknesses of others and reach the throne. Those, who know the dangers of power through violence, are creating a totalitarian system of fear and trying to protect the power they have established or create symbols that will eternalize them.
The illusion of having power has blinded everyone and created a chaotic situation, in which there is no control, and all the Crown Bearers are rulers. They are so into the idea of power that they no longer rule, but each of them thinks they are the invincible and the only king. They forgot that from the very beginning there is one puppeteer, who uses everyone to maintain his power. The constant war goes on, but its end is an absolute decline and destruction.
One of the Crown Bearers realizes that there is no power, only the illusion of power. He goes for self-sacrifice, but the rest of the Crown Bearers also die, because the most expensive price is paid for power.

Our struggle is over. It's your turn.

# Երազներ երազներում

Ժամանակակից պար

# Dreams in Dreams

Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 50 րոպե
**Առաջնախաղը՝** 2010 թվականի սեպտեմբերի 12, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Ջոն Հողյան, «Քրոնոս» քառյակ, Ժան Բատիստ Լյուլի, Ջովանի Բատիստա Պերգոլեզի, Յոհան Սեբաստիան Բախ, Անտոնիո Վիվալդի, Ֆիլիպ Գլաս, Լիզա Ջերարդ, Արվո Պարթ
**Բեմում 7 հոգի:**
**3 մենակատար՝**
Ճամպրուկովը՝ Ցոլակ Մլքե-Գալստյան
Պայուսակովը՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
Ուսապարկովը՝ Նաիրա Քոլոզյան
**4 կատարող՝**
Ճամպրուկովը՝ Գոռ Հակոբյան
Ճամպրուկովը՝ Վարդան Դավթյան
Ուսապարկովը՝ Նանե Հովսեփյան
Պայուսակովը՝ Էլեն Պետրոսյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Հիմնական պարային կառուցվածքը հենվում է հատակի և կանգնած ձևի համադրության ու հակադրության վրա: Պարամտածողության ուսումնասիրությունը սկսվում է պառկած շարժումների ձևափոխումից, որոնք խորհրդանշում են քնած մարդուն դեպի հայելային կանգնած մարդու շարժումները, ովքեր, կանգնած հարթության վրա, պարում են պառկած: Որպես երկրորդ պարային հարթություն՝ բացահայտվում է զուգընկերոջ մարմինը՝ որպես սեփական շարժումը շարունակող տարածք: Պարային ուսումնասիրությունը նաև գնում է ոչ պարային մարմնի մասերի վրա, ինչպիսիք աչքերն են, որտեղ պարը մտնում է ոչ պարային մարմնի մասի մեջ, և դրսևորվում է պարային անիրականությունը:
**Գաղափար**
Մենք ապրում ենք անհոգի քաղաքում, որտեղ տեսնում ենք երազներ: Իրական աշխարհի քաղաքը ներկայացվում է իր անտանելի դաժանությամբ ու անխուսափելիությամբ: Հերոսների ստեղծած իրականությունը խեղաթյուրված է ու չի հենվում ներդաշնակության վրա: Այդ իրականության մեջ ապրողներին հատուկ են ինքնության կորուստը, փախուստը՝ սեփական զգացմունքներից ու ազատությունից և կախվածությունը՝ ժամանակավոր արժեքներից: Իսկական ինքնությանը փոխարինած սոցիալական «ես»-ը, ամբոխի կանոններից դուրս ապրելու անկարողությունը և ինքնահաստատման մոլուցքը նրանց դարձնում են անդեմ ու անկյանք քաղաքի բնակիչներ: Երկատված գիտակցության ստեղծած մղձավանջները իրականությունը վերածում են մտավոր դժոխքի, որը հնարավոր չէ հաղթահարել արթունության պայմաններում: Այստեղից էլ սկսվում է անցումը դեպի երազային իրականություն:
Երազում վերանում են բոլոր արտաքին խոչընդոտները, և բացվում անհատի հոգեկանի բոլոր շերտերը: Խախտվում են անհնարինի ու հնարավորի սահմանները, և չկա վերահսկողություն: Այս վիճակի մեջ հերոսները սկսում են ինքնաիրագործվել, ու վեր են բարձրանում այն բոլոր զգացմունքները, ցանկությունները, թուլությունները, որոնք իրական կյանքում քողարկված են: Երազում վերապրվում է կյանքը՝ իր բոլոր դրսևորումներով: Տեղի են ունենում իրականության մեջ գործած սխալների ընդունումն ու արդարության հաստատումը՝ ինքն իրեն պատժելու միջոցով: Երազն այնքան զորեղ է դառնում, որ կտրվում է կապն իրականության հետ, և ամբողջ կյանքը սկսում է վերածվել երազի: Իրականության մեջ հերոսներն այնքան են կորցնում իրենց դեմքը, որ նրանց թվում է, թե դարձել են մի ամբողջական գիտակցություն: Գիտակցման պատահական պահերը երբեմն ստիպում են հասկանալ, որ այդ ամբողջականությունը իրենց մտքի շերտերում թաքնված երազանքի իրագործումն է երազում, սակայն իրական կյանքի անտանելիությունն ու անխուսափելիությունը մղում են հերոսներին դեպի երազները՝ կորցրած էությունը վերագտնելու:
Իրականության ու երազի սահմաններն անհետանում են, և մնում է միայն իրականն ու անիրականը տարբերակելու անհետացող զգացողությունը:

Մենք ապրում ենք երազների քաղաքում, որտեղ տեսնում ենք երազներ:

**Duration:** 50 min
**Date of the premiere:** September 12, 2010, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** John Hodian, Kronos Quartet, Jean Baptiste Lully, Giovanni Battista Pergolesi, Johann Sebastian Bach, Antonio Vivaldi, Philip Glass, Lisa Gerrard, Arvo Pärt
**There are 7 people on the stage.**
**3 soloists**
The Suitcase Carrier: Tsolak MLKE-Galstyan
The Bag Carrier: Shoghakat MLKE-Galstyan
The Backpack Carrier: Naira Kolozyan
**4 performers**
The Suitcase Carrier: Gor Vardanyan
The Suitcase Carrier: Vardan Davtyan
The Backpack Carrier: Nane Hovsepyan
The Bag Carrier: Elen Petrosyan
**Choreography**
The main dance structure is based on the combination and contrast of the floor and standing way. The study of choreography begins with the modification of lying movements, which symbolize the movements of a person standing mirror-like to the sleeping person, who are dancing lying on the standing dance floor. As a second dance dimension, the body of a partner is being discovered as a space continuing its own movement. The study of dance is done on parts of the non-dancing parts of the body, such as eyes, where dance enters the non-dancing part of the body, and dancing unreality is being manifested.
**Concept**
We live in a soulless city where we see dreams. The city of the real world is presented with its unbearable cruelty and inevitability. The reality created by heroes is distorted and does not rely on harmony. Those, who live in that reality, are characterized by loss of identity, escape from their own feelings and freedom, and dependence on temporary values. The social Self, which replaced the true identity, the inability to live beyond the rules of the crowd and the mania of self-assertion makes them faceless and lifeless city dwellers.  The nightmares created by bisected consciousness turns reality into mental hell, which cannot be overcome while being awaken. From there, the transition to dream realm begins.
In a dream all external obstacles vanish and all the psychic layers of the individual are opened. The boundaries of the impossible and the possible are broken and there is no control. In this situation, the characters start to be self-realized and all the emotions, desires, and weaknesses, which are hidden in the real world, rise up. In a dream, life is being endured in all its manifestations. The acceptance of the mistakes made in reality happens and the establishment of justice by punishing themselves. The dream becomes so strong that the connection with the reality is being cut off and life begins to turn into a dream. In reality, the characters lose their face so much that they seem to become a unified consciousness. Random moments of awareness make them understand that this unification is the realization of the dream hidden in the layers of their minds, but the unbearableness and inevitability of real life pushes the characters to the dreams to regain their lost essence.
The boundaries of reality and dreams disappear, and only a disappearing sense of differentiation of the real and the unreal remains.

We live in the city of dreams where we see dreams.

## Կոմիտասի 10 պատվիրանները

Զգայական շարժում, ժամանակակից պար

Ներկայացման հիմքում ընկած են Կոմիտաս վարդապետի «Տասը պատվիրանները երգչին» աշխատությունը և անձնական նամակները:

## Komitas 10 Commandments

Emotional Dance, Contemporary Dance Performance

The performance is based on the work "Ten Commandments to the Singer" and personal letters of Komitas Vardapet.



**Տևողությունը՝** 40 րոպե
**Առաջնախաղը՝** 2009 թվականի հոկտեմբերի 2, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Յոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի
**Հագուստի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի, «Ատեքս» նորաձևության կենտրոնի
**Երաժշտություն՝** Կոմիտաս (կենդանի կատարումը - 2019)
**Բեմում՝ 7 հոգի:**
**5 մենակատար՝**
Կոմիտաս՝ Յոլակ Մլքե-Գալստյան
Ոգեշնչված, Բուժքույր՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
Լույսի Կերպար՝ Նաիրա Քոլոզյան (2009), Շողակաթ Մլքե-Գալստյան (2015)
Թուղթ՝ Նաիրա Քոլոզյան (2009), Լիաննա Մկրտչյան (2019)
Տականքի Ձեռքեր՝ Շողակաթ Մլքե-Գալստյան (2009), Պետրոս Ղազանչյան (2015)
Աշակերտ՝ Լուսինե Մլքե-Գալստյան
Աղջիկներ, Կանայք՝ Շողակաթ Մլքե-Գալստյան (2009), Նաիրա Քոլոզյան (2009), Լիաննա Մկրտչյան (2019), Ժաննա Իխտարյան (2019)
**2 երաժիշտ՝**
Լուսինե Մլքե-Գալստյան (2019)
Էլիզա Բաղդիյան (2019)
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Շարժումը կանգնած է, բայց դա դադար չէ, այլ անցումն է երաժշտության՝ մարմնի միջով: Չկա արագություն, կա հավասարակշռություն շարժման և երաժշտության միջև: Պարամտածողությունը բացահայտում է քարացած դիրքը՝ որպես շարժվող մարմին: Դադարը քայլի միահյուսվածությունն է երաժշտությանը:
**Գաղափար**
Կոմիտասին վիճակված էր ընտրել դժվարին մի ուղի, որը լուսավորված էր նրա հանճարով ու հայ ժողովրդի նկատմամբ ինքնամոռաց սիրով: Կոմիտասն ընտրում է ստեղծողի, ոգեշնչողի, հայ մշակույթը փրկողի ճանապարհը: Կոմիտասը գիտակցում է, որ միայն ժողովրդական ակունքից սնվելով կարող է ստեղծել մաքուր երաժշտություն, քանի որ երաժշտությունը ժողովրդի մեջ է, նրա էության խորհրդանիշն է ու կյանքի անբաժան ուղեկիցը: Կոմիտասը սրբագրում է հայ ժողովրդական երաժշտությունը՝ վերադարձնելով մաքուր ու պարզ ելևէջներն ու վերագտնելով ինքնատիպ ու հարուստ ժողովրդական ու հոգևոր երաժշտական ժառանգությունը: Նա ոգեշնչում է բոլորին ու դառնում ուսուցիչ, ում գործի շնորհիվ վերակենդանացել է հայկական մշակույթը: Կոմիտասը դառնում է այն մարդը, ում միջոցով ամբողջ աշխարհը սկսում է հաղորդակից դառնալ ու ոգեշնչվել հայկական երաժշտությամբ ու զգալ հայկական երաժշտության խորությունը:
1915 թվականի Հայոց ցեղասպանության առաջին փուլը մշակույթի ու մշակույթը կրողների ոչնչացումն է, իսկ երկրորդ փուլը՝ ժողովրդի: Կոմիտասն ականատես է լինում այս ամենին:
Եվ ահա մեծ երաժշտի լռությունն ու մահը և կորուստը մի ամբողջ ազգի, որը կդիմանա և վեր կհառնի իր ցավից:
Կոմիտասյան երգի միջոցով հայ ժողովուրդը գտավ, ճանաչեց իր հոգին ու իր հոգևոր ինքնությունը:

Քանի դեռ մենք կանք, մեր սրտերում միշտ կապրի Կոմիտասը:

**Duration:** 40 min
**Date of the premiere:** October 2, 2009, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Design of dresses:** Tsolak MLKE-Galstyan, Atex Fashion Center
**Music:** Komitas (live performance - 2019)
**There are 7 people on the stage.**
**4 soloists**
Komitas: Tsolak MLKE-Galstyan
The Inspired One, Nurse: Shoghakat MLKE-Galstyan
The Image of Light: Naira Kolozyan (2009), Shoghakat MLKE-Galstyan (2015)
Paper: Naira Kolozyan (2009), Lianna Mkrtchyan (2019)
Hands of the Gutter: Shoghakat MLKE-Galstyan (2009) Petros Ghazanchyan (2015)
Student: Lusine MLKE-Galstyan
Girls, Women: Shoghakat MLKE-Galstyan (2009), Naira Kolozyan (2009), Lianna Mkrtchyan (2019), Zhanna Ikhtaryan (2019)
**2 musicians**
Lusine MLKE-Galstyan (2019)
Eliza Baghdiyan (2019)
**Choreography**
The movement is stopped, but it is not a pause, it is the transition of music through the body. There is no speed, there is a balance between movement and music. The choreography reveals the petrified position as a moving body. The pause is an entanglement of a step with music.
**Concept**
Komitas was destined to choose a very difficult path that was illuminated by his genius and selfless love for the Armenian nation. Komitas chooses the path of the creator, inspirer, the savior of Armenian culture. Komitas realizes that only by turning to the national roots, one can create pure music, because music is in the nation – it is the symbol of its essence and the inseparable companion of its life. Komitas improves Armenian folk music, returning pure and simple melodies and retrieving the original and rich folk and spiritual musical heritage. He inspires everyone and becomes a teacher, whose work has revived Armenian culture. Komitas becomes the person through whom the whole world begins to get acquainted with and be inspired by Armenian music and feel the depth of it.
The first phase of the Armenian Genocide of 1915 is the destruction of culture and the bearers of culture, and the second phase is the annihilation of the nation. Komitas witnesses all this.
And here is the silence and death of the great musician, and the loss of the whole nation, which will survive and rise from its pain.
Through Komitas music, the Armenian nation found and recognized its soul and its spiritual identity.

As long as we exist, Komitas will always live in our hearts.

## Սասնա Ծռեր. Սանասար և Բաղդասար

Բազմատարր, ազգային-ժամանակակից պար

Ներկայացման հիմքում ընկած է «Սասնա Ծռեր» էպոսի առաջին՝ «Սանասար և Բաղդասար» ճյուղը:

## Sasna Tsrer. Sanasar and Baghdasar

Multimedia, Ethno-Modern Contemporary Dance Performance

The performance is based on the first branch of the Armenian epic "Sasna Tsrer" - "Sanasar and Baghdasar".



**Տևողությունը՝** 50 րոպե
**Առաջնախաղը՝** 2008 թվականի օգոստոսի 31, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ)՝** Յոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի
**Համակարգչային ձևավորումը՝** Գայանե Խաչատրյանի
**Հագուստի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի, «Ատեքս» նորաձևության կենտրոնի
**Երաժշտություն՝** հայկական ժողովրդական երաժշտության և կոմիտասյան մշակումներ
**Բեմում՝ 10 հոգի:**
**7 մենակատար՝**
Սանասար՝ Յոլակ Մլքե-Գալստյան (2008)
Բաղդասար՝ Արթուր Բարսեղյան (2008), Գոռ Հակոբյան (2011)
Ծովինար՝ Շողակաթ Մլքե-Գալստյան (2008)
Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամ՝ Նաիրա Քոլոզյան (2008)
Կանաչ քաղաքի աղջիկ՝ Հայարփի Մարուքյան (2008), Էլեն Պետրոսյան (2011)
Գագիկ թագավոր՝ Վարդան Դավթյան (2008)
Խալիֆ՝ Անդրանիկ Բաբայան (2008), Պետրոս Ղազանչյան (2011)
**3 կատարող՝**
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Պարամտածողությունը կառուցվում է խորհրդանիշների մարմնացման վրա: Ամեն շարժումը խորհրդանիշ է, որի շնորհիվ կառուցվում են պարային, խորհրդանշային նախադասություններ: Սա պարային համակարգ է, որը միաձուլում է պարային մտածողությունը հայկական նախաքրիստոնեական ծիսական մտածողությանը, ինչի շնորհիվ ստեղծվում է ժամանակակից ծիսական իրադարձություն էպոսի համատեքստում:
**Գաղափար**
Հայկական էպոսում ներկայացված զրույցների ու էպոսի կերպարների մեջ տեսնում ենք հայկական մտածողության առաջացման հիմքերը, հայկական խառնվածքի ու ազգին բնորոշ հատկանիշների ձևավորումն ու զարգացումը, արժեհամակարգի ստեղծումը: Ներկայացվում են Սանասարի ու Բաղդասարի ծննդի, նրանց սխրագործությունների և Սասունի կառուցման պատմությունները: Այս բոլոր պատմությունների մեջ անընդհատ շեշտադրվում են այն արժեքները, որոնք կարևորում է հայ ժողովուրդը դարեր շարունակ, շերտ առ շերտ վեր է հանվում այն գաղափարական հիմքը, որն ունի հայկական մտածողությունը, իսկ Սանասարն ու Բաղդասարը ներկայացնում են հայ ազգի հավաքական կերպարը:
Շատ խորհրդանշական է Սանասարի ու Բաղդասարի ծնունդը, քանի որ մենք ականատես ենք լինում «հրաշքի» ու հավատի երևույթին, որը հայկական մտածողության կարևորագույն մասն է կազմում ու գոյաբանական անհրաժեշտություն է հայի համար: Ծովինարի հավատն առ բարձրագույն ուժերը փրկակար նշանակություն է ունենում նաև ազգի համար, ու Ծովինարի կերպարը ցույց է տալիս մոր ու կնոջ ունեցած կարևոր նշանակությունը հայի գոյատևման մեջ: Սանասարին ու Բաղդասարին հատուկ գերբնական ուժը, ուղղամտությունը, հավատարմությունը, անվախությունը, կարեկցանքի զգացումն ու արդարամտությունը նստած են նաև հայ ժողովրդի գիտակցության խորքերում ու ազգի համար բախտորոշ են եղել:
Բաղդադի Խալիֆը հանդիսանում է էպոսի բոլոր չարագործների հավաքական կերպարը, ում չարագործությունները միշտ հաղթահարում են Սանասարը և Բաղդասարը՝ շնորհիվ իրենց ուժի ու հավատի:
Այն ամենը, ինչը շրջապատում է Սանասարին՝ Թուր Կեծակին, Խաչ Պատերազմին ու Քուռկիկ Ջալալին, էպոսի կերպարների գերբնական ուժի դրսևորումն է, որը փոխանցվում է սերնդեսերունդ:
Սանասարի և Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամի սիրո պատմությունն էպոսի զգայական փուլն է: Նրանց սերը, որը ներկայացվում է տղամարդու ու կնոջ հավասարությամբ, դարավոր հայկական ընտանեկան մշակույթի ներկայությունն է էպոսի մեջ: Այս ամենին միանում են Բաղդասարի և Կանաչ քաղաքի աղջկա սիրո պատմությունը և Ծովինարի մայրական օրհնությունը՝ որպես էպոսի առաջին ճյուղի վերջ և մյուս ճյուղերի սկիզբ:
Սանասարի ու Բաղդասարի անցած ճանապարհը նման է հայոց պատմությանը, որին հատուկ է անընդհատ պայքարը սեփական տարածքի ու ինքնության պահպանման համար:

Եկավ Մհերի ժամանակը:

**Duration:** 50 min
**Date of the premiere:** August 31, 2008, Yerevan, Armenia
**Choreographer:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage:** Tsolak MLKE-Galstyan
**Multimedia:** Gayane Khachatryan
**Design of dresses:** Tsolak MLKE-Galstyan, Atex Fashion Center
**Music:** Armenian folk music and arrangements of Komitas' Music
**There are 10 people on the stage.**
**7 soloists**
Sanasar: Tsolak MLKE-Galstyan (2008)
Baghdasar: Arthur Barseghyan (2008), Gor Hakobyan (2011)
Tsovinar: Shoghakat MLKE-Galstyan (2008)
Karsoun Joukht Tsam Deghdzoun Tsam: Naira Kolozyan (2008)
Kanach Kaghaki Aghjik: Hayarpi Marukyan (2008), Elen Petrosyan (2011)
King Gagik: Vardan Davtyan (2008)
Caliph: Andranik Babayan (2008), Petros Ghazanchyan (2011)
**3 performers**
**Choreography**
The choreography is built on the embodiment of symbols. Every movement is a symbol, thanks to which dance and symbolic sentences are built. This is a dance system that combines dance thinking with Armenian pre-Christian ritual thinking, that is why a modern ritual event is being created in the context of the epic.
**Concept**
In the legends and characters of the Armenian epic, we see the basis of the creation of the Armenian thinking, the formation and development of the Armenian character and characteristics special to the nation and the creation of the value system. It represents the stories of Sanasar's and Baghdasar's birth, their heroic deeds and the construction of Sasoun. In all these stories the values, important for the Armenian people for centuries, are being constantly emphasized, the ideological basis of the Armenian mentality is being exposed layer by layer, and Sanasar and Baghdasar represent the collective image of the Armenian nation.
Sanasar's and Baghdasar's birth is very symbolic, because we witness the phenomenon of "miracle" and faith, which is the most important part of Armenian thinking and is an existential necessity for the Armenians. Tsovinar's belief in the highest powers is also of life-saving significance for the nation, and Tsovinar's character shows the importance of mothers and women in the survival of the Armenian nation.
Sanasar and Baghdasar's special supernatural power, uprightness, loyalty, fearlessness, sense of compassion and justice are also sitting in the depths of the consciousness of the Armenian people and have been decisive for the nation.
The Caliph of Baghdad is a collective image of all the evildoers who are always defeated by Sanasar and Baghdasar, thanks to their strength and faith.
Everything surrounding Sanasar - Tur Ketsaki, Khach Paterazmi, and Kourkik Jalali - are the manifestation of the supernatural power of the characters of the epic passed on from generation to generation.
Sanasar's and Karsoun Joukht Tsam Deghdzun Tsam's love story is the sensual phase of the epic. Their love, represented by the equality of men and women, is the evidence of centuries-old Armenian family culture in the epic. Baghdasar's and Kanach Kaghaki Aghjik's love story and Tsovinar's maternal blessing joins all of this as the end of the first branch of the epic and the beginning of the other branches.
The path Sanasar and Baghdasar passed through is similar to Armenian history, which is a constant struggle for the preservation of its territory and identity.

Mher's time has come.

## Գույներ

Գործողություն-նկարչություն, ժամանակակից պար

## The Colors

Action-Painting, Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2007 թվականի հոկտեմբերի 12, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Յուլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Յուլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Յոհան Սեբաստիան Բախ, Ժան Բատիստ Լյուլի, Ջոն Հոդյան, Գորան Բրեգովիչ, «Քրոնոս» քառյակ
**Բեմում՝ 2 հոգի:**
**2 մենակատար՝**
Սև, Մարմնագույն՝ Յուլակ Մլքե-Գալստյան
Կապույտ, Մուգ Կարմիր՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Գույնի վերափոխումն է շարժման, որը տեղի է ունենում զգացմունքային բազմազանության մեջ: Կոպիտ և փափուկ պարաձևերը միասնական են և, իրարից չկտրվելով, ստեղծում են միաոճ ձև: Շարժումն ունի գունային հետք, որը բացահայտում է շարժման հետագիծը, ինչը չի թողնում՝ հայացքը պոկվի պարից: Գունային և շարժումային բազմաիարթությունը տարածք է, որտեղ նույնիսկ մի շարժումն ունի տասնյակ կրկնվող շարժումներ գույնի և պատկերի արտացոլման մեջ:
**Գաղափար**
Գույները հանդես են գալիս որպես մարդկային հարաբերությունների մեջ ապրող էակներ: Գույներն անձնավորված են ու ներկայացնում են անհատին բնորոշ հոգեկան առանձնահատկություններ, ու նրանք փոխհարաբերվում են ուրիշ գույների, այսինքն՝ այլ հոգեկերտվածք ունեցող անհատների հետ: Կան 4 գույներ՝ Սևը, Կապույտը, Մուգ Կարմիրը և Մարմնագույնը:
Սևին հատուկ է ամենազորությունն ու անզորությունը: Նրա հարաբերություններն այլ գույն-կերպարների հետ կրում են բռնատիրական բնույթ, քանի որ նա ցանկանում է բացարձակապես միշտ հաստատել իր գերիշխանությունն ու զգալ իր ամենազորությունը: Նա չունի զգայական նուրբ դաշտ:
Մուգ Կարմիրին հատուկ է ուժեղ սեռականությունն, ու նա սիրում է խաղալ բոլորի զգացմունքների հետ՝ օգտագործելով կիրքն ու իր հմայքը:
Կապույտն ավելի ներդաշնակ է ու չունի շեշտված ուժեղ ու թույլ կողմեր, սակայն միշտ ուզում է ինքնահաստատվել՝ իմանալով, որ ի սկզբանե պարտված է:
Մարմնագույնը զուրկ է ինքնությունից. նա չունի դեմք ու անհատականություն, սակայն ունի զգայական ուժեղ դաշտ ու պատրաստ է անմնացորդ նվիրման:
Գույները վերապրում են մարդկային հարաբերությունների մի քանի ձևեր: Բռնատիրական, որը հակադրության  ժամանակ է ձևավորվում ու հիմնված է ուժի վրա: Սակայն սրա արդյունքում գույնը գիտակցում է, որ իր ամենազորության հակառակ կողմը անզորությունն է ու մենակությունը:
Կրքի վրա հիմնված հարաբերությունները եսասիրական բնույթ ունեն, ու ամեն ինչ լինում է միայն բնազդային մակարդակում: Այս դեպքում կիրքը գույնին սահմանափակում է ու դարձնում Ես-ի ստրուկը:
Միակողմանի սերը, որում զգացմունք տածողը կարող է ամբողջովին կորցնել իր ինքնությունն ու Ես-ը, սակայն գիտակցության մեջ առկա թույլ զարգացած գույնի Ես-ը թույլ չի տալիս ամբողջական ինքնաոչնչացում տեղի ունենա, ու գույնը գտնում է իրեն:
Անտարբերության վրա հիմնված հարաբերություններում երկու կողմերը թույլ չեն տալիս հասկանալ իրար ու օգնել. ուղղակի ընկղմված են իրենց բարդույթների մեջ:
Նայելով գույներին ոչ անհատական հարթության մեջ՝ նրանք իրականում առանձնացված չեն ու գոյություն ունեն ներդաշնակության մեջ:

Գույն, շարժում, հայացք....

**Duration:** 30 min
**Date of the premiere:** October 12, 2007, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Johann Sebastian Bach, Jean Baptiste-Lully, John Hodian, Goran Bregovic, Kronos Quartet
**There are 2 people on the stage.**
**2 soloists**
Black, Ochre: Tsolak MLKE-Galstyan
Blue, Bordeaux: Shoghakat MLKE-Galstyan

**Choreography**

Modification of a color to movement which occurs in emotional diversity. Sharp and smooth dance forms are united and create a similar style without being cut from each other. The movement has a color trail that reveals the trajectory of the movement, which does not allow the look to come off the dance. Multi-dimensional quality of color and movement let even one movement to have dozens of repetitive movements in color and image reflection.

**Concept**

The colors represent creatures living in human relationships. The colors are personified and represent psychic peculiarities characteristic to a personality and they interact with other colors, that is, with people with another mental structure. There are 4 colors: Black, Blue, Bordeaux and Ochre.

Black is characterized by omnipotence and impotence. Its relationships with other color-characters are of tyrannical essence, because it always wants to establish dominance and feel its omnipotence. It does not have a delicate sensual field.

Bordeaux is characterized by strong sexuality and loves to play with everyone's emotions, using passion and its charm.

Blue is more harmonious and has no emphasis on strengths and weaknesses, but it always wants to be self-established, knowing that it is originally defeated.

Ochre is lacking in identity: it has no face and personality, but it has a strong sensual field and is ready for unconditional devotion.

The colors experience several forms of human relationships. The tyrannical one, which is being formed as a result of contradiction and is based on force. But as a result, the color realizes that the opposite side of its omnipotence is impotence and loneliness.

Relationships based on passion are selfish and everything happens only at an instinctive level. In this case, passion restricts the color and makes the slave of Self.

One-sided love, in which the one who has the feeling can completely lose their identity and Self, but the "Self" of the weakly developed color existing in the consciousness does not allow a complete self-destruction and the color finds itself.

In relationships based on indifference, the two sides do not allow each other to understand one another and help themselves, and they are simply immersed in their complexes.

Looking at colors in a non-individual dimension - they are not actually separated and exist in harmony.

A color, a movement, a look...

## Արդյո՞ք խենթ եմ ես

Ողբերգություն, ժամանակակից պար

## Am I Crazy?

Drama Dance, Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 40 րոպե
**Առաջնախաղը՝** 2006 թվականի հոկտեմբերի 6, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Յոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի ձևավորումը՝** Հերիքնազ Գալստյանի
**Հագուստի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի, «Ատեքս» նորաձևության կենտրոնի
**Երաժշտություն՝** Յոհան Սեբաստիան Բախ, Արմենակ Շահմուրադյան, Ջոն Հոդյան, Լիզա Ջերարդ, Դեդ Քեն Դենս, «Քրոնոս» քառյակ, Ապոկալիպտիկա, Մետալիկա, Ջո Սատրիանի
**Բեմում՝ 6 հոգի:**
**Մենակատար՝**
Ստեղծագործող՝ Շողակաթ Մլքե-Գալստյան
**5 կատարող՝**
Երազանքի Կերպար՝ Յոլակ Մլքե-Գալստյան
Ներքին Բացասական՝ Հայարփի Մարուքյան
Վախ՝ Սյուզաննա Հարությունյան
Սյուռ՝ Նաիրա Քոլոզյան
Սիրահարված՝ Արթուր Բարսեղյան
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Պարամտածողությունը կառուցված է շարժման վրա, որը բացահայտում է զգացմունքը: Հոգեբանական լարվածությունը և ներքին բախումները ներկայանում են պարային բազմաիարթության մեջ, որտեղ զգացմունքները և շարժումները միասնական են և առանձին՝ միաժամանակ: Ներքին ողբերգությունը շարժման մեջ է, և ամեն քայլը հոգեբանության հայելային արտացոլումն է մարմնում:
**Գաղափար**
Ստեղծագործողը փորձում է արվեստը ծառայեցնել իրեն, ու ստեղծվում է փակ համակարգ, որտեղ ամեն ինչ ամփոփված է ինքն իր մեջ. ելքեր չկան, կա միայն կործանմանը գնացող մղում:
Ստեղծագործողն այնքան է կտրված իր իսկական էությունից ու կենտրոնացած իր չկայացած Ես-ի վրա, որ մնացած ամեն ինչ կորցնում է նշանակությունը: Կորչում է կապն իրականության հետ: Անիրականն ավելի շոշափելի է, քան իրականը: Նա սկսում է խառնել իր երևակայության ստեղծած կերպարներին ու իրական մարդկանց. նա իր գլխում վախերի ու երազանքների ստեղծած լաբիրինթոսի մեջ է, ու անընդհատ կրկնվող խենթությունն ամբողջովին պատել է նրան: Իրականությունը բախվում է անիրականի հետ, և իրականության ու անիրականի սահմանները սղվում են:
Ստեղծագործողը վերադառնում է ինքն իրեն ու, զգալով իրական կորուստ, կորցնելով այն ամենը, ինչ սիրել է ու ոչնչացնելով անիրական տեսիլքները, որոնց հետ ինքն ապրում է, գալիս է իրական արվեստի գաղտնիքին:

Չկան շահեր, կա արվեստ:

**Duration:** 40 min
**Date of the premiere:** October 6, 2006, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage:** Heriqnaz Galstyan
**Design of dresses:** Tsolak MLKE-Galstyan, Atex Fashion Center
**Music:** Johann Sebastian Bach, Armenak Shahmuradyan, John Hodian, Lisa Gerrard, Dead Can Dance, Kronos Quartet, Apocalyptica, Metallica, Joe Satriani
**There are 6 people on the stage.**
**1 soloist**
Creator: Shoghakat MLKE-Galstyan
**5 performers**
Dream Image:Tsolak MLKE-Galstyan
Internal Negative: Hayarpi Marukyan
The Fear: Suzanna Harutyunyan
The Surreal: Naira Kolozyan
The One in Love: Arthur Barseghyan
**Choreography**
The choreography is built on movement, which reveals the feeling. Psychological tension and inner clashes are presented in a multi-dimensional dance, where feelings and movements are united and separated at the same time. The inner drama is in movement and every step is a mirror reflection of psychology in the body.
**Concept**
The Creator tries to enthrall art to herself and a closed system is being created, where everything is self-contained: there are no exits, there is only an impulse for destruction. The Creator is so cut off from her true essence and concentrated on her failed Ego, and everything else loses its significance. The connection with reality is being lost. The unreal is more tangible than reality. She begins to mix the characters created by her imagination with real people: she is in the labyrinth of fears and dreams in her head, and constantly repeating madness has completely embraced her. Reality collides with unreality and the boundaries between reality and unreality blur.
The Creator returns to herself, and feeling a real loss, losing everything she has loved and destroying unrealistic visions she lives with, comes to the secret of true art.

There are no interests, there is art.

## Ակունք

Բացօթյա ժամանակակից պար

Ներկայացումը հիմնված է Հայկական Դիցաբանության վրա:

## Roots

Open-Air Contemporary Dance Performance

The performance is based on the Armenian mythology.



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2005 թվականի օգոստոսի 11, Գառնի, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի, «Ատեքս» նորաձևության կենտրոնի
**Երաժշտություն՝** հայկական ազգային պարեղանակներ, Ջիվան Գասպարյան, «Հովեր» երգչախումբ, Մնոթ, Սեպուլտուրա, Ձեծի Պիկասո
**Բեմում՝ 7 հոգի:**
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Հայկական ազգային պարերն ունեն հազարամյակների պատմություն, և ուսումնասիրությունն արվել է ոչ միայն պահպանված պարաձևերի, այլ նաև նախաքրիստոնեական և ծիսական շարժումները բացահայտելու համար:
Քոչարին և յարխուշտան՝ որպես ազգագրական և ժողովրդական պարի երկու ամենաընդունված ձևեր, դարձել են պարամտածողության հիմքը:
Օգտագործելով ազգային երաժշտություն և ժողովրդական երաժշտության տարբեր մշակումներ՝ պարամտածողությունը բաժանել է պարը մեղեդային կատարողականության, ռիթմային կատարողականության և տրամադրության կատարողականության երեք հիմնական ձևերի, որոնց վրա կառուցվում է պարամտածողությունը:
**Գաղափար**
Պատմվում են հայ հեթանոսական աստվածների՝ Վահագնի, Միհրի, Աստղիկի ու Անահիտի հետ կապված առասպելներն ու ժայռապատկերների ստեղծման համար հիմք հանդիսացող պատմությունները: Անահիտի, Աստղիկի, Վահագնի ու Միհրի ծննդի, նրանց հատուկ գերբնական ուժերի ձևավորման ու կիրառման և հայկական աշխարհընկալման մեջ նրանց դերի մասին ավանդազրույցների ներկայացման միջոցով տեսնում ենք, թե ինչպիսի արժեքներով ու գաղափարներով է ի սկզբանե առաջնորդվել հայ ժողովուրդը, ու ինչն է էական եղել նրա համար բնության մեջ ու տիեզերքում:
Աստվածները կենդանանում են ու ստանում իրենց ուժերը. Վահագնը ստանում է ուժն ու խիզախությունը: Աստղիկը դառնում է սիրո և ջրի աստվածուհին: Միհրը ղեկավարում է Արեգակը, լույսը և ժամանակը: Մայր-Անահիտն ունի կյանք պարգևելու ընդունակությունը:
Աստվածություններից բացի հայ ժողովրդի համար շատ կարևոր խորհրդանիշ-ժայռապատկերների՝ Մարալի, Որսորդի, Ռանչպարի ու Ցլի մասին պատմությունները ցույց են տալիս վաղեմի ժամանակների հայկական կենսակերպի առանձնահատկությունները: Հայ աստվածություններն ու ժայռապատկեր-խորհրդանիշերը հանդես են գալիս ներդաշնակ համակեցությամբ, երբ աստվածների ուժերի միջոցով կարգավորվում է կյանքը երկրի վրա, ու ժողովուրդն իրեն պաշտպանված է զգում: Հայկական աստվածությունների մասին ավանդազրույցներից պարզ է դառնում, որ նրանց հատուկ են խաղաղասիրական մղումներն ու սեփական ուժի գիտակցման միջոցով ներքին թշնամիներին հաղթահարելը:
Սկզբում աստվածների բնույթն ավելի համամարդկային էր, ազգայինը բաժանված չէր, սակայն վտանգի առկայությունը նրանց բերում է ինքնագիտակցման, հակամարտության ժամանակ նրանք գալիս են հայկական ինքնությանը, որը Հայկ Նահապետի կերպարն է: Նա, հաղթելով Տիտանյան Բելին, դնում է հայկականության սկիզբն, ու սկսվում է կերտվել Մայր Հայաստանը:

Ինքնությունով՝ դեպի ազգություն, ազգությունով՝ դեպի մարդ:

**Duration:** 30 min
**Date of the premiere:** August 11, 2005, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage:** Tsolak MLKE-Galstyan
**Design of dresses:** Tsolak MLKE-Galstyan, Atex Fashion Center
**Music:** Armenian National Dance Melodies, Jivan Gasparyan, Hover Chamber Choir, Snot, Sepultura, Deti Picasso
**There are 7 people on the stage.**

**Choreography**

Armenian national dances have a history of millennia and the study has been done not only to discover the preserved dances, but also the pre-Christian and ritual movements.
Kochari and Yarkhushta, the two most popular forms of national folk dance, have become the basis for the choreography.
Using different arrangements of national and folk music, the choreography divided the dance into three main forms: melodic performance, rhythmical performance, and mood performance, on which the choreography is built.

**Concept**

Here it is told the myths connected with the Armenian pagan gods - Vahagn, Mihr, Astghik, and Anahit - and the stories, which are the base of the creation of the petroglyphs.
Through the representation of the legends about the birth of Anahit, Astghik, Vahagn, and Mihr, the formation and usage of their special supernatural forces, and their role in the Armenian worldview, we see the values and ideas of the Armenian people from the very beginning, and we see what was essential for them in nature and in the universe
Gods are becoming alive and getting their forces. Vahagn receives strength and courage, Astghik becomes the goddess of love and water, Mihr controls the Sun, light and time, Mother Anahit has the ability to give life.
In addition to the stories about deities, other stories about the symbol-petroglyphs; Siberian stag, Hunter, Peasant and Ox, show the peculiarities of the old Armenian lifestyle.
Armenian deities and symbol-petroglyphs are in harmonious coexistence, when the forces of the gods control life on the Earth and the nation feels protected. From the legends about the Armenian deities, it is clear that it is specific for them peace-loving motivations and overcoming inner enemies through the realization of their own strength.
At first the nature of the gods was more universal and the national aspect was not separated, but the presence of danger brought them to self-consciousness, and during the conflict they come to the Armenian identity, which is the image of Hayk Nahapet (Hayk the Patriarch). He, defeating the Titanian Bel, sets the beginning of Armenianness, and the formation of Mother Armenia begins.

With Identity to nationality, with nationality to humanity.

## Արարում

Լուսային շարժում, ժամանակակից պար

## Creation

Phosphoric Movement, Contemporary Dance Performance



**Տևողությունը՝** 40 րոպե
**Առաջնախաղը՝** 2004 թվականի հունիսի 26, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի ձևավորումը՝** Հերիքնազ Գալստյանի
**Հագուստի ձևավորումը՝** Ցոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** հնդկական ազգային երաժշտություն, հայկական շարականներ (միջնադարյան հայկական եկեղեցական երաժշտություն), Անոթ, Դեդ Քեն Դենս, «Քրոնոս» քառյակ
**Բեմում՝ 7 հոգի:**
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Պարամտածողության ուսումնասիրության առարկան կենդանիների շարժումն է, որը միաձուլվում է երկնային մարմինների շարժմանը և ստեղծում պարամտածողության տարածք, որը կառուցվում է շրջանաձև շարժման ու քարացած դիրքի հակասության վրա: Ձեռքի շարժում, որը վերածվում է պտույտի, և պտույտ, որը միաձուլվում է երկրագնդի և տիեզերքի հավերժ պտույտներին:
**Գաղափար**
Արարչի մտածողական-ստեղծագործական գործընթացի արդյունքում ի հայտ է գալիս կյանքը: Կյանք, որն իր մեջ կրում է Արարչին հատուկ՝ այլ կյանք ստեղծելու կարողությունը: Միտքը դառնում է ստեղծող ու առաջնորդող ուժ:
Արարչի մտքերն սկսում են կյանքի կոչվել Արարչի Արական ու Իգական Ուժերի կողմից: Արարման ընթացքում խավարից ու դատարկությունից ստեղծվում են կյանքի բոլոր ձևերն, ու ամեն ինչ ստանում է իր նախնական տեսքը: Կյանքի ձևերը հաստատում են իրենց տեղը տիեզերքում ու սկսում գտնել իրենց ինքնությունը:
Գոյության բոլոր ձևերն ինքնագիտակցման ճանապարհին են և մյուսներին ցույց են տալիս իրենց կարողություններն ու իրենց եզակիությունը:
Առանց բանականության բոլոր արարածները կորցնում են իրենց ինքնությունն ու հայտնվում քաոսի մեջ:
Միայն Արարչի ուժերի վերափոխումը դեպի բանականություն ունեցող էակների, ինչպիսին մարդն է, վերացնում է քաոսը և դառնում այն սյունը, որի շուրջ կյանքի բոլոր ձևերը վերագտնում են իրենց ինքնությունը: Ամբողջ տիեզերքը կենտրոնանում է մարդու մեջ:
Կա գիտակցումը կեցության, և հավատը հաջորդ քայլն է, որ կլինի որպես մարդկային արարչագործություն:

Արարիչն արարեց մեզ, և մենք փորձում ենք արարել:

**Duration:** 40 min
**Date of the premiere:** June 26, 2004, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage:** Heriqnaz Galstyan
**Design of dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Indian Folk Music, Armenian Sharakans (medieval Armenian church music), Snot, Dead Can Dance, Kronos Quartet
**There are 7 people on the stage.**

**Choreography**

The subject of the study of choreography has been the movement of animals that merges with the movement of celestial bodies and creates a choreographic space, which is being constructed on the contradiction of a circular movement and a petrified position. A hand movement that turns into a rotation and a rotation that is merged with the Earth's rotation and the eternal rotation of the universe.

**Concept**

As a result of the Creator's intellectual-creative process life emerged. Life carries in itself the Creator's ability to create another life. The mind becomes a creative and leading force.

The Creator's thoughts begin to come to life by the Creator's Masculine and Feminine Forces. Throughout the creation process, all forms of life are created from darkness and emptiness, and everything gets its initial appearance. The forms of life confirm their place in the universe and begin to find their identity.

All forms of existence are on the path of self-consciousness and show others their abilities and uniqueness.

Without intellect, all creatures lose their identity and fall into chaos.

Only transformation of the Creator's forces into intelligent beings, like human beings, eliminates the chaos and becomes the pillar around which all forms of life regain their identity. The whole universe is being concentrated in human beings.

There is awareness of being and faith is the next step that will happen as a human creation.

The Creator created us and we try to create.

## Which Is Our Guilt, God?

Open-Air Contemporary Dance Performance

## Ո՞րն է մեր մեղքը, Աստվա՛ծ

Բացօթյա ժամանակակից պար



**Տևողությունը՝** 30 րոպե
**Առաջնախաղը՝** 2003 թվականի հուլիսի 26, Երևան, Հայաստան
**Պարաբեմադրիչ (խորեոգրաֆ) և ներկայացման գաղափարի հեղինակ՝** Յոլակ Մլքե-Գալստյան
**Բեմի և հագուստի ձևավորումը՝** Յոլակ Մլքե-Գալստյանի
**Երաժշտություն՝** Ջուզեպպե Վերդի, հայկական շարականներ (միջնադարյան հայկական եկեղեցական երաժշտություն), Դեդ Քեն Դենս, Յո-Յո Մա, Բոբբի Մքֆերին, ճապոնական հարվածային գործիքներ
**Բեմում՝ 10 հոգի:**
**Պարամտածողություն (խորեոգրաֆիա)**
Պարամտածողության առաջին ոգեշնչման աղբյուրը ծիսական երկրպագության ձևերն են տարբեր մշակույթների մեջ, երկրորդը՝ ճապոնական և չինական մարտարվեստների, ինչպես նաև հնդկական և տիբեթական շարժումային մտածողության ոճերն են, որոնց միաձուլումով ստեղծվել է պարամտածողությունը, որը մի շարք շարժումային մշակույթների համախմբում է մի տեսանկյան մեջ:
Հենվելով պատմության վրա՝ շարժումները բացահայտում են ամեն տեսարանի հոգեբանական ծանրությունը և կառուցում թատերական պարային տարածք զգայականության շնորհիվ:
**Գաղափար**
Սկզբում տիրում էր Լույսի իշխանությունը, ու ամեն ինչ ներդաշնակություն մեջ էր: Հավասարություն, որը բարձր է ընտրությունից: Միայն մեղավոր մարդն էր դուրս ներդաշնակությունից: Հայտնվեց մեղքի գաղափարը, ու դրանից հետո բոլորը հրաժարվեցին լույսից: Քայլ, որից հետո չկան բարոյական սահմաններ: Սակայն մարդկությունը դեռևս չէր գիտակցում Խավարի կործանարար ազդեցությունը: Նախանձի ու Ատելության իշխանություն, որի մեջ կա միայն ստրկություն: Միայն խավար է ու ատելություն՝ լույսի նկատմամբ:
Ինքնազոհաբերությունը ազատագրեց բոլորին ատելության և նախանձի իշխանությունից: Ներման և մեղքի գիտակցման հետևանքով մարդկությունը ընտրում է Լույսը ու վերադառնում դեպի իր նախնական լուսային, ներդաշնակ վիճակին:
Ու նորից Ատելության ու Նախանձի ուժերը կիսաքուն կսպասեն իրենց հերթին:

Կա միայն ընտրություն:

**Duration:** 30 min
**Date of the premiere:** July 26, 2003, Yerevan, Armenia
**Choreographer and author of the concept of the performance:** Tsolak MLKE-Galstyan
**Design of the stage and dresses:** Tsolak MLKE-Galstyan
**Music:** Giuseppe Verdi, Armenian Sharakans (medieval Armenian church music), Dead Can Dance, Jo-Jo Ma, Bobby McFerrin, Japanese Drums
**There are 10 people on the stage.**

**Choreography**

The first source of inspiration of the choreography is the forms of ritual worship in different cultures, the second one - the style of Japanese and Chinese martial arts, as well as the forms of the Indian and Tibetan movement thinking, and the choreography has been created by combining them, which is the combination of several movement cultures in one perspective.

Based on the history, movements reveal the psychological weight of every scene and build a theatrical dance space thanks to sensuality.

**Concept**

At first it was the power of Light and everything was in harmony. Equality, which is higher than the choice. Only the guilty human being was out of harmony. The idea of guilt has appeared and everyone was turned away from the light after it. A step, after which there are no moral boundaries. However, humanity still did not realize the devastating consequence of the darkness. The prevalence of Jealousy and Hatred, in which there is only slavery. It is only darkness and hatred towards light.

Self-sacrifice liberated everyone from the prevalence of Jealousy and Hatred. As a result of forgiveness and realization of guilt, humanity chooses Light and returns to its initial luminous, harmonious state.

And again, the forces of Hatred and Jealousy will wait for their turn in a half-asleep state.

There is only a choice.

**Authors:** Tsolak MLKE-Galstyan, Shoghakat MLKE-Galstyan
**Content Writer:** Stella Loretsyan
**Designer:** Eliza Baghdiyan
**Creative Staff:** Petros Ghazanchyan, Lusine MLKE-Galstyan, Inna Ghazaryan

**Հեղինակներ՝** Ցոլակ Մլքե-Գալստյան, Շողակաթ Մլքե-Գալստյան
**Բովանդակությունը՝** Ստելլա Լոռեցյանի
**Ձևավորող՝** Էլիզա Բաղդիյան
**Ստեղծագործական անձնակազմ՝** Պետրոս Ղազանչյան, Լուսինե Մլքե-Գալստյան, Իննա Ղազարյան

The First Contemporary Dance Company in Armenia
Ժամանակակից պարի առաջին թատրոնը Հայաստանում